



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2452

491.99-5
p-23



491.542-5
F-26

Ա. ԲԱՀԱԹՐԵԱՆՑ.

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԵՇԽԵՐՀԻԿ ԼԵՋՈՒԻ

ՇՐՋԱՆ Ա.

ՊԱՐՁ, ԸՆԴԱՐՁԱԿԵԱԼ ՆԻ ՄԻԱԲՈՐԵԱԼ ՆԱԲԱԴԱՍՈՒԹԻՒՆ.

Յառաջարանը տե՛ս «Մանկավարժական
Թերթի» № 4. 1878 թ.

Non multa, sed multum.
Քիչ—բայց լաւ:

ՏՓԻՒՍ.

Տպարան Յ. Մարտիրոսեանցի.
1879.

425
42-ԲԱ

2010

12087

ՀԻՄ
12-ԲԻ

Дозволено цензурою. Тифлисъ 3 января 1879 г.

Тип. И. Мартиросянца, на Орбелиановской улицѣ, д. № 5

12002

Ք Ե Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

Ա Շ Խ Ա Ր Հ Ի Կ Լ Ե Զ Ո Ւ Ի

Շ Ր Ա Ա Ն Ա

Մ Տ Ա Ծ Ո Ւ Թ Ե Ա Ն Վ Ա Ր Ժ Ո Ւ Թ Ի Ի Ն Վ

§ 1. Գ ո յ ա կ ա ն.

Որ տեղ ես դու այժմ:— Ի՞նչ է գտնուում դաստաս-
նը: Ինչի՞ վերայ ես դու նստած: Ի՞նչի մօտ ես դու նըս-
տած: Ի՞նչ ունիս դու քո ձեռիդ. քո վերադ կային: Վա-
ռարան, սեղան, նստարան, գրատախտակ, գրիչ, գիրք,
կաւիճ կային իբր են կամ առարկաներ: Ի՞նչ ասացի ես այժմ:
Ինչո՞վ ես դու իմանում, որ առարկաներս՝ վառարան, սե-
ղան կային գտնուում են դասատանը: Ես պէտքով եմ նոցա
Ի՞նչով ես դու նոցա տեսնում: Այն առարկաները,
որոնք աչքով կարելի է տեսնել, կոչուում են պեսանելի ա-
ռարկաներ: Կրկնիր: Անուանիր առարկաներ, որոնք կարելի
է տեսնել: Անուանիր տեսանելի առարկաներ, որոնք
գտնուում են պարտիզումը— ծրի մէջ— զաշտի վերայ— ան-
տառի մէջ— եկեղեցումը կային կային:

Թէև դու այժմ դասատանը նստած ես, բայց փողոցով մի կառք անցնելիս դու խօսոյն կ'իմանաս. դու նորան չես տեսնում, ուրեմն ինչպէ՞ս ես իմանում: — Նորա ձայնը լսո՞ւմ եմ: Ինչպէ՞ս է կարելի իմանալ որ մի տեղ զանգակ է կախած, — որ ամալը որոտում է, — որ եկեղեցում երգում են և այլն: Այն առարկաները, որոնց ձայնը կարելի է լսել, կոչւում են լսելի: Ուրեմն ինչո՞վ է կարելի երկրորդ իմանալ որ առարկաներ կան: 1, 2: Անուանեցէք մի քանի առարկաներ ևս, որոնց գոյութիւնը կարելի է իմանալ լսելիով (ականջով):

Եթէ մենք երեկոյեան մութին գնալու լինինք ծաղկանոց, կարո՞ղ ենք իմանալ որ այնտեղ վարդ, մանուշակ մեխակ կայ: Եթէ մենք խոհանոց մտնելու լինինք, կարո՞ղ ենք իմանալ որ այնտեղ կրակորանի վերայ խորոված կայ: Մենք հորստո՞ւմ ենք. մենք իմանում ենք մեր հորստելիով և այլն և այլն՝ 1, 2, 3:

Եթէ ես քեզ մի բան տամ, և դու աչքերդ խփած բերանիդ մէջ գնես խօսոյն կ'իմանաս, որ ես քեզ շաքար եմ տուել: Անուանեցէք շատ առարկաներ, որ կարելի է ճշտել (ճաշակելք) 1, 2, 3, 4:

Գիշերը մութին եթէ սենեակումը ման գալիս մի բանի դպչենք, խօսոյն կ'իմանանք, որ սա վառարանն է, կամ սեղանը, կամ շէշը և այլն: Մենք շաքարո՞ւմ ենք (շոշափելք): 1, 2, 3, 4, 5:

Տեսնելը, լսելը, հոտոտելը, ճաշակելը, շոշափելը կոչվում են շփայարանների գործողութիւնք: Քանի՞ զգայարանք ունի իւրաքանչիւր առողջ մարդ: Ի՞նչպէս են նորա կոչում: Ինչո՞վ ենք իմանում, որ աշխարհիս վերայ իրեր, առարկաներ կան:

Որպէս զի ես քեզ կոչեմ, դու պիտի մի անոն ունե-

նաս: Ուրեմն ի՞նչ պիտի ունենան նաև առարկաները: Ի՞նչ չէր կարելի անել, եթէ առարկաները անուն չունենային: Ի՞նչ է այս առարկայի անունը: Սեղան: Այս: Վառարան: Այս: Պատուհան: Յոյց տուէք առարկաների վերայ և ասացէք, թէ ի՞նչ է նոյա անունը: Ասացէք կաթնակեր, անասունների, թռչունների, ձկների, միջատների ծառերի, թուփերի, խոտերի, քարերի և այլն անուններ:

Լսեցէք. Այն բառը, որ մեզ տա՞մ է, լսելի է ասարկոյի անունը — թէ նա ի՞նչպէս կոչւում — որ մեր մէջ արթնացնում է մի որ և է իրի սրտակեր — կոչւում է գոյակոն: — Կրկնիր: Ուրեմն ի՞նչ է գոյականը:

Վարժութիւնք: Անուանեցէք առարկաներ, որոնք գաղտնւում են դասատան — սենեակի — ննջարանի — խոհանոցի — մատանի — ատուի — եկեղեցու — և այլն մէջ — գաղտնւմ ըլլում — օգու՞մ քաղաքում — զիւրում — շուկայում և այլն: Երկրիս — երկնքի — գաշտի վերայ և այլն:

Անուանեցէք առարկաներ, որոնք ծախւում են շուկայում և շինուած են փայտից — երկաթից — կաւից — բրձից — թղթից — կաշուց և այլն: Ուտելի — լսմելի — հագնելի առարկաներ:

Անուանեցէք մարդոյս մարմնի — գգեսանների — սեղանի — աթոռի — ծառի — սրտուհանի — շան — ծիծեռնակի — տան և այլն մասերը:

Տուէք գործաւորների — տղայոց — գործիքների — ազգական — ծառերի — անասունների — թռչունների և այլն անուններ:

Բ. Մարդկանց անունները սկսւում են գլխագրով, իսկ միւս առարկաների անունները փոքրիկ գրով: Բերանացի — գրաւոր:

§ 2.

Եզական և Յորնական:

Եթէ Արշակը քեզ ասելու լինի, թէ «ուսուցիչը գալիս է», դու ի՞նչպէս կը հասկանաս քանի ուսուցիչ է գալիս: Ուրեմն՝ երբ որ միայն մի ուսուցիչ վերայ ենք խօսում, ասում ենք ուսուցիչ: Իսկ եթէ մի ուսուցիչ չէ, շատերն են, այն ժամանակը ինչպէս պիտի ասենք: Ուսուցիչներ: Ի՞նչպէս ենք ասում, երբ միայն մի սեղանի վերայ ենք խօսում, ի՞նչպէս եթէ շատերի վերայ ենք խօսում: Եթէ միայն մի առարկայի վերայ ենք խօսում, ասում ենք թէ գոյականը էզական թւում է, իսկ եթէ շատ առարկաների վերայ ենք խօսում, ասում ենք թէ գոյականը յոսական թւում է:

Որոնեցէք X յոգուածից գոյականներ: Եզականներից շինեցէք յոքնականներ-յոքնականներից եզականներ: Բերանացի-գրաւոր:

1) Դրէք բառս «աշակերտ» յոքնականում: Այսպէս նաև ուսուցիչ-մատիտ-տախտակ: Գոյականի մէջ ի՞նչ փոփոխութիւն եղաւ: Ուրեմն՝ դու ինչո՞վ ես կարող ճանաչել յոքնական թիւը: Նորանով, որ եզականի վերայ յաւերացնում է ներ:

Քանի՞ վանկ ունի բառս աշակերտ-ուսուցիչ-մատիտ-տախտակ: Նրկու կամ երեք վանկ ունեցող բառերը կոչւում են բազմական: Ի՞նչ ասացի: Ուրեմն ի՞նչ է բազմական վանկ բառը: Ասացէք բազմական բառեր և դրէք յոքնականում: Ուրեմն՝ ի՞նչպիսի բառեր են ընդունում յոքնականում մասնիկս ներ:

2, Քանի՞ վանկ ունի բառս հայր-մայր-քոյր-էջ-հաւ և այլն: Դրէք այդ բառերը յոքնական թւում: Ի՞նչ յաւերացրի՞ր այժմ եզականի վերայ: Եր: Ուրեմն՝ ինչպիսի՞ բառեր են յոքնականում ընդունում մասնիկս ներ: Ինչո՞վ է կարելի երկրորդ՝ ճանաչել յոքնական թիւը:

Ասացէք միավանկ բառեր և դրէք յոքնականում-չեղ, խաչ, ծառ, խոզ, կով, սեխ, աչք, օղ, արտ, արջ, նաւ, բատ, ծիտ, սագ, վարդ, քիթ, փիղ, կուժ, մաղ, մաճ, կոթ, թոկ, փակ, ճիւղ և այլն և այլն:

3, Երբեք-երբեքներ: Ինչո՞վ է վերջանում «երեսայ» բառը: Ի՞նչ փոփոխութիւն էք տեսնում յոքնականում բացի ներ մասնիկից: Ուրեմն ի՞նչպէս է կազմում այ վերջացած բառերի յոքնականը: Դրէք յետագայ բառերը յոքնականում— շղթայ, ընծայ, կաթսայ, հսկայ և այլն և այլն:

Որոնեցէք X յոգուածներից գոյականներ և եզականները դրէք յոքնականումը, յոքնականները-եզականումը:

§ 3.

Ըծական

ա) Ի՞նչ գոյն ունի հաւկիթը: Ի՞նչ գոյներ ունին երգեցիկ թռչունների ձուերը: Ի՞նչ գոյն է յոսակ վարդին-մանուշակին-մարգարիտին-բաղեղին և այլն: Անուանիր այն գոյները, որոնք դու գիտես: Սպիտակ, կարմիր, կապոյտ, դեղին, կապուտակ կամ երկնագոյն, մանուշակագոյն, թուխ, սև, կանաչ, գորշ: Ասիր առարկաներ, որոնք սպիտակ, կարմիր և այլն են: Վարդից կարելի է

նորա կարմիր գոյնը բաժանել, կարմիրը մի կողմ դնել և անգոյնը միւս կողմ (մեծ գունդ, երկայն գրիչ և այլն):
Որովհետեւ կարմիր գոյնը յարուս է վարդին, ուստի և ասում ենք, որ կարմրութիւնը վարդի յատկութիւնն է: Կաթը, արին, կրակ և այլն:

բ) Մինչև այժմ ասած յատկութիւնները վերաբերւում էին առարկայի գոյնին: Բայց կան և այնպիսի յատկութիւններ, որոնք առարկայի մեծութեանն են վերաբերւում: Խնչպէս է լեռուը, ի՞նչպէս բլուրը (լեռուը մեծ է, բլուրը փոքրիկ և այլն): քաղաքն ու գիւղը-փողոցն ու նրբուղին-մագաղաթն ու նամակի թուղթը-ծովն ու գետը-թեյն ու չուսնը-ջայլամն ու ծիարը-ազուան ու մեղուն-աստուածաշունչն ու այլ բնարանը-աթոռն ու սեղանը, աշտարակն ու խրձիթը և այլն և այլն: Անուանեցէք մեծ , փոքրիկ, երկայն, կարճ, բարձր, ցածր, լայն, նեղ, խոր, երես և այլն և այլն առարկաներ: Խնչ յատկութիւններ է կարող ունենալ տունը, ծառը և այլն: Գրաւոր:

գ) Ուղղութեան ցոյց դասակարգումներ: Խնչ առարկաներ են շեղ, կոր, ուղղահայեաց, հորիզոնական և այլն: Խնչ ուղղութիւն ունի տանիքից կախուած սառուցը-կարող կացինը-ապտակը-լողացող բազը-աշտարակը-կանգնած մարդը-տանիքի նաւը-քիւրը- երգը-ժամացուցի ձօձանակը— լեռան կողերը և այլն: Գրեցէք ձեր քարտախտակները վերայ ուղղութիւն ցոյց տուող յատկութիւններ:

դ) Արտադրանքի կամ չի:— Խնչպէս է երգեցիկ թռչունների կտուցը- նոցա ոտները: Խնչպէս է ընդհակառակն զիշատողներինը և այլն: Խնչպէս է լինում գնդակը, աղեղը տէգը, սրինգը, եղեգը, ասեղը, զանակը: Խնչ առարկաներ են հաստ, բարակ, ուղեղ, ծուռ, հարթ, նեղ, լայն, մեծ, փոքրիկ և այլն: Գրաւոր:

ե) Որ զգայարաններով է իմանում առարկայի գոյնը, մեծութիւնը, ուղղութիւնը, ձևը: Բայց կան այնպիսի յատկութիւններ, որոնք մենք իմանում ենք մեր ընդունել (ճաշակելով): Խնչպէս է լինում շաքարը, քացախը, աղը, սղպեղը, մաղձը, լեղին և այլն: Խնչն համրն է քաղցր, թթու, դառն, աղի, բարկ, փոթոթ և այլն: Խնչն է հիւթալեց, սնդարար, կտրուկ և այլն: Գրաւոր:

զ) Առարկաների յատկութիւնները կարելի է իմանալ նաև հոտառելով: Խնչպիսի՞ հոտ ունի վարդը, քացախը, մուշկը, վառուտի ծուխը և այլն: Առարկաների յատկութիւնները ի վերջոյ կարելի է իմանալ նաև շոշափելով: Ձուրը կամ ցուրտ է, կամ տաք: Խնչպէս է բուրդը, եթէ բողբոջաօտը լինինք քարի հետ: Ձուկը ողորկ է, իսկ փողոցը անհարթ և այլն: Գրաւոր:

է) Խնչպէս են թռչունները իւրեանց շարժողութեամբ: Խնչպէս է նոցա երգը:— Յետագայ կենդանիներիս ի՞նչ յատկութիւնն է ձեզ յայտնի: Խնչպէս է առիւծը, սագը, ծիարը, աղուէսը, էշը, առիւծը, գառը, նապաստակը, վազը, կատուն և այլն: Գրաւոր:

ը) Խնչ յատկութիւններ են կարող տալ յետագայ առարկաներիս-ջրին-շանր-ուկուն-բազին-ձիւնին - ծառին- հորին— պատուհանին-սղոցին և այլն: Հարկաւոր է պահանջել մի և նոյն առարկայի համար որչափ կարելի է շատ յատկութիւններ: Ձուրը կամ ցուրտ է, կամ տաք, կամ հոսանուտ (ծորան) է, կամ կայուն (անշարժ), դաղջ (եղի), տաք, սառն, սառած, զով, ախորժելի, հոտած, դառն, թթու, աղի, առողջարար, օգտաւէտ, պղտոր, սղմախառն, ցխոտ, տղմուտ, մաքուր, պարզ, թափանցիկ, անհոտ, անհամ և այլն:

Թ) Ինչպէս է այն, որ կոր չէ, որ թաց, տաք, թեթեւ, զառն, լայն, սպիտակ, ջանասեր, թափանձիկ, յուսալի, լաւ, պարզ, արագ, ընթաց, թոյլ վայրկեի, ազքատ, թանկ, ուրախ, կուշտ, լի, հին, առողջ, նեղ, ճշմարիտ, արգար, հեռի չէ (ինչ որ կոր չէ, նա ուղի է) Գրաւոր:

Այն բառը, որ ցոյց է տալիս (որոշում է) գոյականի մի որ և է յատկութիւնը, կոչվում է ածական: Արտագրեցէք X յողուածներից բոլոր ածականները:

§ 4

Բ ա յ — Գ ո ը ծ ո ղ ու թ իւն:

Գարրոցումը մենք անգործ չենք նստած, մենք մի բան ենք գործում: Ի՞նչ եմ անում (գործում) է՝ գարրոցումը: Ի՞նչ էք անում դուք գարրոցումը—գարրոցից դուրս: Ուրիշ մարդիկն էլ են մի բան գործում: Ի՞նչ է անում տանը ձեր մայրը—ձեր հայրը: Ի՞նչ է անում ասաղձագործը, գերձակը, դարբինը, երկրագործը, վաճառականը, ձկնորսը, խոհարարը, հովիւը, քահանան, քարողիչը, աւազակը և այլն:

Անասուններն էլ են մի բան անում: Ի՞նչ է անում ձին, շունը, խոզը, կատուն, առիւծը, թռչունը, ձուկը, գորտը, որդը և այլն: Ի՞նչ են անում յետագայ անասուններս, երբ նորա ձայն են հանում—երբ մենք նոցա ձայնը լսում ենք. շունը, ագաււր, այծը, ոչխարը, օձը, խոզը, գորտը, ծիծեռնակը, աղանիւն, արջը, կիւն և այլն:

Քոյսերն էլ են մի բան անում: Ծառը բուսանում է, ծաղկում է, տերեւում է, տերեւաթափ է լինում, պտուղ է բերում, թառամում է, չորանում է, ստուեր է տալիս, կորանում է, թեքւում է, կտորւում է, կանդնում է, ընկնում է և այլն և այլն:

Մինչև անգամ անկենդան բաներն էլ են մի բան անում: Քարը սեղմում է, սառուցը սառցնում է, ջուրը թրջում է, օդը զովացնում է, հողմը մռնչում է, կառքը ճռճռում է, ջրաղացը չքիչքիչում է և այլն:

Ո՞վ է սուլում, աղաղակում, զռուում, մռնչում, մընչում և այլն: Ի՞նչն է ծաղկում, հոսում, բուրում, շողում, փայլում, հոլովում և այլն Ո՞վ է պարում, քնում, լաց լինում, եփում, վաճառում, կարում, կռում և այլն: Ի՞նչ են անում երաժիշտները, նկարիչները, որսորդները, ուսուցիչները և այլն: Ի՞նչ ես կարող դու գործել քո մարմնոյ յետագայ անդամներովդ, գլխովդ— աչքերովդ—ականջներովդ—քնթովդ—լեզուովդ—շրթունքներովդ—ատամներովդ—ձեռներովդ—մտաներովդ—ուսներովդ և այլն: (Լիակատար պատասխաններ):

Ով որ մի բան է անում, նա գործի է: նա գործում է: Փոխանակ ասելու, թէ նա անում է, գործում է և այլն, կարելի է ասել նա գործողութեան մեջ է: Ե՞րբ է գանւում գործողութեան մեջ ուսուցիչը, աշակերտը, ասաղձագործը, լուսցարարը և այլն: Ուրեմն՝ ի՞նչ են ցոյց տալիս բառերս. ուսուցանել, սովորել, սերտել, տաշել, սղոցել, լուսնալ և այլն: Գործողութիւն ցոյց տուող բառերը կոչվում են—բայ:

Գրեցէք յետագայ բայերս և նոցա առաջին դրեք այն բայերը, որոնք նոցա հակառակ նշանակութիւն ունին. լալ (ծիծաղել), վաճառել, մրսել, սիրել, գտնել, քնել, (տքնիլ) հարցանել, փնասել, ժողովել, խօսել, գովել:

դնալ, հրամայել, թող տալ, շինել, ծածկել, ուրախանալ, ընկնել, տանել և այլն: Նախագասութիւններ:

§ 5

ԱՆՃՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ:

Ո՞ր է խօսում այժմ գասատանը: Ուրեմն՝ ես ի՞նչ եմ անում: Ուրեմն՝ ես ի՞նչ անեմ: Մի անձն, որ խօսում է: Ուրե՛մն՝ խօսելու համար ի՞նչ անձն է հարկաւոր: Մի անձինք, որ խօսէ-խօսող անձն է: Ի՞նչքան անկարելի կլինէր, եթէ խօսող անձն չլինէր: Տանը, գաշտումը, անտառումը և այլն խօսելու համար ի՞նչ անձն է հարկաւոր:

Բայց առհասարակ խօսող անձի հետ մի ուրիշ անձըն էլ է լինում: Եթէ դու փողոցից խօսակցութեան ձայն լսելու լինես, ի՞նչ կը կարծես թէ այնտեղ միայն մի անձըն կայ: Ի՞նչու չէ: Ուրեմն՝ խօսելու համար քանի՞ անձըն են հարկաւոր: Երբ որ երկու մարդ միմեանց հետ խօսում են, ասում ենք թէ՛ նորա խօսակցութեան են անում, նորա խօսակցութեան են անում: Խօսակցելիս՝ ո՞չ թէ միայն մի անձն է հարկաւոր, որ խօսէ, այլ հարկաւոր է և մի ուրիշ անձն, որ նորան լսէ: Կրկին: Ուրեմն խօսակցութեան համար քանի՞ անձն է հարկաւոր: Ի՞նչ է անում մէկը-ի՞նչ միւսը:

Բայց բացի դոցանից շատ անգամ պատահում է և երրորդ անձը: Ես Հայկին դուրս կանչեմ այստեղ, կանգնացնեմ ու հետը խօսեմ-քանի անձն կը լինինք: Ո՞րը և ո՞րը: Ո՞ր անձը կը լինիմ ես (խօսողը): Ո՞ր անձը կլինի Հայկը (լսողը):— Այժմ ես Հայկին ասում եմ. «Քո եղբայր

Արմենակը շատ ջանասէր է, երէկ նա իւր դասերը լու էր պատրաստել:» Այժմ մի անձն էլ յաւելացաւ. նա մեզ հետ խօսեց: Նորա հետ էլ ոչ ոք չէ խօսացել. ևս խօսեցի նորա վերայ: Կրկնեցէք: Ուրեմն խօսակցութեան ժամանակ քանի՞ անձն է կարող լինել:— Այն անձը, որ խօսում է, կոչւում է ասողին անձն. այն անձը, որի հետ խօսում են, կոչւում է երկրորդ անձն. այն անձը, որի վերայ խօսում են, կոչւում է երրորդ անձն: Կրկնեցէք:

Երբ որ առաջին անձը իւր վերայ խօսում է, նա միշտ գործ է ածում մի փոքրիկ բառ. ո՞րն է այն բառը: Ես: Ի՞նչ բառ ենք գործ դնում այն անձի տեղ, որի հետ խօսում ենք: Իս: Ի՞նչ բառ ենք և այլն: Ես:— Ուրեմն՝ «ես» նշանակում է ասողին անձն, «դու» երկրորդ, «նա» երրորդ:

Եթէ խօսող անձը իւրեան և իւրեան հետ ուրիշ աներին վերայ է խօսում, նա ասում է. «էս»: Եթէ մի-քանի անձանց հետ է խօսում, նա ասում է «դու»: Այսպէս և այլն: Օրինակներ:

Եթէ ես ասեմ. «Ես ի՞նչ համար մի գիրք եմ գնել», քանի երրորդ անձի վերայ խօսած կլինիմ ես և ի՞նչ բառերովս: Ի՞նչպէս պիտի ասէի, եթէ ես երկրորդ կամ երրորդ անձի վերայ խօսէի: «Իս» էն համար, նա իւրեան համար»: Յորնակի:

Այժմ պատմիր X վէպը այնպէս, իրբե թէ X-ի փեղ, փոխարէն դու լինէիր: Մի օր էս... Ի՞նչ բառ էիր դու X-ի փեղ կամ փոխարէն միշտ գործ դնում: Ես: Ի՞նչ տեսակ բառ է «X»: Գոյական: Այդ գոյականի փեղ կամ փոխարէն դուք պատմելիս գործ էիք ածում մի ուրիշ բառ. ի՞նչ և այլն: Որովհետեւ այդ բառերը գործ են ածւում ուրիշ բառերի, ուրիշ անունների փոխարէն, ուս-

տի ի՞նչպէս էր կարելի կոչել: Փրօսանաւ կամ դէրանաւ
(դեր—փոխանակ): Անուանի՛ր մի քանի փոխանուաններ:
Ի՞նչու համար այդ բառերը կոչուում են փոխանուն:

Որոնեցէ՛ք X յօդուածներից փոխանուններ և նոցա
առաջին դրեցէ՛ք այն դոյականները, որոնց փոխարէն նո-
քա դործ են ածուած: Որոնեցէ՛ք փոխանուններ, որոնք
դրուած են առաջին անձի, երկրորդ անձի, երրորդ ան-
ձի տեղ

§ 6.

Նախադրութիւն:

Ես այստեղ իմ ձեռիս ունիմ մի բանալի. այստեղ էլ
ահա ընկած է մի գիրք: Ես կարող եմ նոցա միմեանց
հետ զանազան յարաբերութեանց մէջ դնել: Ի՞նչ ա-
սացի ես այժմ: Ո՞ր տեղ է գտնուում այժմ բանալին: Գրք-
քի վերայ: Գիրքն ու բանալին այժմ միմեանց հետ այս
յարաբերութեան մէջ են գտնուում, բանալին գրքի վերայ
է, իսկ գիրքը բանալուն գաւի՞ն: Նոքա այժմ միմեանց
հետ ի՞նչ յարաբերութեան մէջ են գտնուում: Այսպէս
նաև, բանալին գտնուում է գրքի վերայ, ներայ (գաւի՞ն).
Ծօք, ճեջ, աստղիկ քամի՞ն. (էփե՞ն): Ո՞վ է կարող անուա-
նել այն բառերը, որոնք մենք դործ դրինք երկու ա-
ռարկայի առ միմեանս ունեցած յարաբերութիւնքը ար-
տայայտելու համար: Այդ բառերը կոչուում են նախդրեր:
Ինչպիսի՞ բառ է ուրեմն նախդիրը:

Ի՞նչ յարաբերութեանց մէջ է կարող գտնուիլ մար-
դը տան հետ (դէպի տունը): Տան մէջ, վերայ, մօտ, ներ-

քոյ, առաջին, կողքին, քամակին և այլն: Ի՞նչ յարաբե-
րութեան մէջ է գտնուում պատկերը պատի հետ, ձիա-
ւորը ձիի հետ, զանգակատունը (աշտարակը) եկեղեցու
հետ, սեղանը սենեակի հետ և այլն: Երբ ես իմ սենեա-
կիցս դուրս եմ գալիս, անցնում եմ նախ մեր պարտիզո-
վը, ծառերին ներսեւից, ծաղիկների ճապովը, յետոյ անցնելով
եկեղեցուց աստղիկ, մեր դրացու տան էփեւից հասնում
եմ դպրոցի աստղը և այլն: Ի՞նչ նախդիրներ են այստեղ
յառաջ գալիս: Ի՞նչ յարաբերութեան մէջ է գտնուում
շաբաթ օրը կիւրակէ օրուան հետ, յունուարը փետրու-
արի հետ, դարունը ամառուան հետ և այլն: Նաբաթը
գալիս է կիւրակէից աստղ, իսկ կիւրակէն շաբաթից յետոյ:

Վարժութիւնք

Մէջ— Ի՞նչի մէջ է գտնուում թորը-ձուկը-կրակը
և այլն և այլն: Որոնեցէ՛ք առարկաներ, ո-
րոնք մի բանի մէջ են գտնուում:

Աստղի— Ի՞նչ է կանգնած իմ առաջին, քո առաջիկ, նորա
առաջին: Ի՞նչ է գտնուում եկեղե-
ցու առաջին և այլն:

Ո՞վ է նստած տան առաջին և այլն:

Եփեւի } Ո՞վ է կանգնած (գտնուում) իմ ետեւի •
Քամիի } (քամակի •), քո ետեւի • (քամակի •), նո-
րա ետեւի • (քամակի •): Ի՞նչ է գտնուում
հայելու—արօրի—տան և այլն քամակին:

Մօտ— Ի՞նչն է սեղանի-վառարանի-տան մօտ:

Վերայ— Երեխաները նստած են նստարանների
վերայ: Գտակը գտնուում է գլխի վերայ:

Փայտը լողում է ջրի վերայ: Գիրքը ընկած է սեղանի վերայ: Երբ ի՞նչ է գտնուում իմ շուրջ, քո շուրջը: Զրո, նորա շուրջը և այլն: Ի՞նչ է գտնուում պարտեզի-գտակի—տակառի—դոյլի և այլն շուրջը:

Բայց նախադրութիւնը ասանձին չի գործ ածուում, նորա մտ անշուշտ պիտի լինի մի ուրիշ բառ: Տեսնենք ի՞նչ բառ: Զանգակատունը գտնուում է—առաջին: Ի՞նչ բառ է դեռ ևս հարկաւոր: Ի՞նչ բառ է եկեղեցին: Ուրեմն՝ նախադրութեան հետ անշուշտ պիտի լինի և մի գոյական: Շատ օրինակներ: Խօսելիս կամ դրելիս նախ դիրքը ի՞նչ յարաբերութեան մէջ է գտնուում գոյականի հետ: Նա դալիս է գոյականից չեոյ: * Ուրեմն՝ ինչո՞վ ես կարող դու ճանաչել նախդիրը:

Ասացէ՛ք մի քանի նախադասութիւններ և նոցա մէջ իւրաքանչիւր անգամ գործ դրէ՛ք մի նախդիր: Նախ դիրները գործ դրէ՛ք այժմ դերանունների հետ: Օր. վերմակը գտնուում է ի՛մ, չո՛ւ, նորա, ճէ՛ր, չէ՛ր, նոյա՛ վերայ. յատակը գտնուում է ի՛մ, չո՛ւ և այլն տակին (ներքոյ). Սեղանը կանգնած է իմ և այլն առաջիս. Գտակը գտնուում է ի՛մ, չո՛ւ և այլն գլխիս, գլխիդ և այլն վերայ: Երեխան նստած է իմ և այլն քրոջ մօտ և այլն և այլն:

Որոնեցէ՛ք X յօդուածներից նախդիրներ:

* Ծան. Մինք չուղեցինք առանց ու դէպի նախդիրների համար մի կանոն ես կազմել: Թող դա ուսուցիչը բացատրէ ընթերցանութեան ժամանակ:



§ 7

Ժամանակ և ժամանակի ձևերը:

Ե՞րբ էք դպրոց դալիս-տուն գնում. պառկում. քնում. արթնանում. վերկենում: Ե՞րբ ես ծաղկում ծառերը: Ե՞րբ է ձիւն գալիս և այլն:—Այժմ, վեր կացէ՛ք, բայց-երբէք: Մի բան գործեցէ՛ք, բայց երբէ՛ք: Այսպէս կարելի՞ է:—Ա՛յ:

Ի՞նչ որ գործուում է, պիտի գործուի մի որ և է ժամանակում: Ամենայն ինչ պատահում է որ և է ժամանակում:—Երբ որ դուք մի բան էք անում—կարդում էք, գրում էք, խաղում էք, երգում էք և այլն—դուք անում էք այդ կամ ցերեկը, կամ գիշերը—կամ առաւօտեան, կամ կէսօրից յետոյ—ճաշից առաջ, կամ ճաշից յետոյ և այլն:—Ժամանակը բաժանուում է մասերի. տարին ժամանակի մի մասն է: Իսկ այս ժամանակը (տարին) ի՞նչ պէս է բաժանուում: Ամիսներ, շաբաթներ, օրեր: Իսկ ճրը ինչ մասերի է բաժանուում: Ժամերի, րոպէների, վայրկեանների: Շատ օրեր միասին կազմում են ժամանակի մի մասը—շաբաթներ, ամիսներ, տարուան եղանակներ, տարիներ: Այն տարին, որ այժմ մենք ունինք, կոչուում է ներկայ, այժմեան տարի: Անցեալ տարի (հերու): Եկող տարին կոչուում է առաջիկայ տարի: Ներկայ, անցեալ, ապագայ ժամանակ:

Բացի այդ երեք ժամանակից կո՞յ մի ուրիշ ժամանակ ևս: Ինչ որ գործուում է, նա անշուշտ պիտի գործուի այս երեք ժամանակներից մէկի մէջ: Այն, ինչ որ ես այժմ խօսում եմ ձեզ հետ ժամանակի վերայ, նա պատահում է ներկայումս. այն, ինչ որ ձեզ Քրիստոսի

1007
1037

վերայ պատմել եմ, նա պատահել է անշեւոյն-ճը. իսկ այն, որ դուք պիտի ժողովէք ձեր գրեանքը և սուն գնաք, նա պիտի պատահէ աստուծոյ: Անցեալը անցել է, ներկան այժմ է պատահում, ապագան (ապառնին) պիտի կատարուի:

Այլ՝ արժ.— 1) Իրէք յետագայ բառերս-կարդալ, գրել, խաղալ, գնալ և այլն՝

- ա) Ենթեւոյն չեռ-ճը — ես կարգում եմ և այլն:
- բ) Անշեւոյն չեռ-ճը — ես կարգացի, գրեցի և այլն:
- գ) Ապառն-ճը — ես կը կարգամ, կը գրեմ և այլն:

Այստեղ ուսուցիչը պէտք ունի աշակերտներին բացատրելու, որ այդ երեք ժամանակները կազմելու համար հարկաւոր է ժամանակ բայս՝ է՛՛, է՛ և այլն և մասնիկը՝ է՛:

2) Բացի այդ օրինակ վարժութիւնից՝ ամենազեղեցիկըն է երեխաներին վէպեր պատմել տալ ա) ներկայ, բ) անցեալ, գ) ապառնի ժամանակներում: Այդ օրինակ վարժութիւնը առաւել բնական է. իսկ բնականը պիտի վեր դասուի: Միայն այդ դիպուածում հարկաւոր է հետեւել այս ընթացքին. 1, Աշակերտները ասուցչի արտագրում են այն վէպը, որի ժամանակները պիտի փոփոխուին:

2, Իրարոյն նոքա իւրեանց տեսրակների վերայ կարգում են արտագրածը: Յետոյ կրկին կարդալով ուսուցչի առաջնորդութեամբ փոխում են ժամանակները և նշանագծում այն բայերը, որոնց ժամանակները պիտի փոփոխուին:

3, Աշակերտները այդպէս բերանացի պատրաստածը գրի են անցնում և ի վերջոյ

4, Ուսուցչի ուղղացնելուց յետոյ արտագրում:

§ 1.

Խօսելիս՝ մենք բառերով ենք արտայայտում մեր մտքը, զգացողութիւնն ու կամքը: Այդ բառերը ունենում են միշտ մի ընդհանուր կապ:

Եւ յի բառերը, որոնք միմեանց հետ կապում են մի միտք արտայայտելու համար, կոչւում են նախորդականութիւն:

Ուրեմն՝ յիդուն կազմում է նախադասութիւններից, նախադասութիւնները՝ բառերից:

Բառը կազմում է վանկերից, վանկը ձայներից, որոնք և նշանագրւում են թղթի վերայ գրելով:

Ուստի և քերականութիւնը խօսում է նախորդականութիւնների, բառերի ու գրելի վերայ:

Գ Լ Ո Ի Խ Ա.

Ն ա խ ա դ ա ս ու լ թ իւ ն:

§ 2.

- Շունը մի անասուն է:
- Անգղը մի թռչուն է:
- Սոսին մի ծառ է:

«Շունը մի անասուն է»: Այս բառերով մենք մի բան ենք արտայայտում շան վերայ-ի՛նչ. Որ նա մի անասուն է:

1, Այն բառերը, որոնցով մի բան ենք արտայայտում, կոչւում են նախորդականութիւն:

2, Այն առարկան, որի վերայ մի բան ենք ասում, կոչւում է Ենթակայ:

3, Այն, ինչ որ ասում ենք ենթակայի վերայ, կոչւում է սարահարկ (*):

Վարժ:—Ի՞նչ է սարահարկը, արտուտը և այլն տես Մ. Վ. § 1: Ի՞նչ է սեղանը, բազմոցը, աթոռը, բազկաթոռը... սղոցը, դուռը, մուրձ, անկիւնաշափը, քերիչը, գայիկոնը... գտակը, կոշիկը և այլն:—Ի՞նչ է սօսին, եղևինը, շոճը, թեղօջը... ականատը, որոգայթը, թակարգը, ծուղակը, ուռկանը, կարթը. Ո՞վ էր Հայկը, Արամը, Վաղարշակը, Վարդանը... Գէգէնը, Աբրահամը, Յովսէփը, Մովսէսը և այլն:

Ուսուցիչը գրատախտակի վերայ գրում է բառեր, իսկ աշակերտները նախ-բերանացի, ապա գրաւոր որոշում են թէ առարկան ի՞նչ է:

§ 3.

Հայկը մի աշակերտ է	և մի աշակերտ եմ:
Արշակը երգում է:	Գո՛ւ երգում ես:
Ամալը որոտում է:	Նա՛ որոտում է:

1, Ենթական կարող է արտայայտուիլ մի անձի կամ մի իրի անունով: Անձի կամ իրի անունը կոչւում է գոյական:

Ուրեմն՝ ենթական կարող է լինել նախ՝ գոյական:

2, Ենթական կարող է արտայայտուիլ նաև մի այնպիսի բառով, որ գործ է ածւում գոյականի տեղ:

Հայկը մի աշակերտ է: Ո՞ւմ վերայ է այստեղ խօսքը:

(*) Ստորոգել ցր. ասել:

Ուրեմն՝ այստեղ ենթական ի՞նչ տեսակ բառ է: Այժմ՝ դենք թէ Գո՛ւ ես Հայկը, այն ժամանակը ի՞նչպէս կառուցիր— թէ դու ի՞նչ ես: Նա՛ աշակերտ եմ: Ո՞ր բառն է այժմ ենթակայ դարձել: Մինչև այժմ ենթական լինում էր գոյական, իսկ այժմ ինչ տեսար: (Տես նաև Մ. Վ. § 5):

3, Այն բառը, որ վարւում է գոյականի տեղը կոչւում է գերանուն (*):

Ուրեմն՝ ենթական կարող է լինել երկրորդ գերանուն Վարժ. — 1, Կազմեցէք այնպիսի նախադասութիւններ, որոնց ենթական լինի գերանուն— «ես երգում եմ» — դո՛ւ, նա՛, ես ի՞նչ էի անում— դո՛ւ, նա՛: Բերանացի— Գրաւոր: 2, Որոնեցէք X յօդուածներից սարգ նախադասութիւններ և ենթակայի տեղ դրէք գերանուններ:

§ 4.

Շունը հաջում է:
 Շունը հաւատարիմ է:
 Շունը մի անասուն է:

- 1, Ստորոգեալը ցոյց է տալիս՝
 - ա) թէ ենթական ի՞նչ է ունի կամ գործած,
 - բ) թէ ենթական ինչպէս է (ինչ գոյի, ձևի մեծութեան և այլն է):
 - գ) թէ ենթական ինչ է, ո՞վ է:

2, Այն բառը, որ ցոյց է տալիս թէ ենթական ի՞նչ է անում, կոչւում է Ե՞ր:

3, Այն բառը, որ ցոյց է տալիս թէ ենթական ինչպէս է, կոչւում է ածական:

(*) Գ. ե. ր. նշանակում է փոխանակ, տեղ:

4, Այն բառը, որ ցոյց է տալիս թէ ենթական ինչ է, կոչուում է գոյական:

5, Աւրեմն ստորոգեալը կարող է արտայայտուիլ կամ բայով, կամ ածականով, կամ գոյականով:

6, Ստորոգեալը ենթակայի հետ կապուում է մի ուրիշ բայով եւ, ես, է, եմք, էք, են և այլն): Այդ բայը, որ մեզ օգնում է ստորոգեալ շինելու, կոչուում է օժանդակ:

6, Օժանդակ բայը միայնակ չի կարող ստորոգեալ շինել:

Վարժ: Կազմեցէք նախադասութիւններ, որոնց ստորոգեալը լինի ա) գոյական, բ) ածական, գ) բայ:—Մէկը ստոււմ է ենթական, միւսը որոնում է պատշաճաւոր ստորոգեալը (Տէս § 2. և Մ. Վ. §§ 1, 3 և 4): Բերանացի—Գրաւոր:

§ 5.

Մտաւր ծաղկում է (քանի՞ ծառ): Մտները ծաղկում են Թռչունը երգում է: — — — Թռչունները երգում են: Նա կարգում է: — — — Նորա կարգում են:

1, Եթէ մտն մի առարկայի վերայ է խօսուում, քերականական լեզուով ստում են թէ՛ նախադասութիւնը և շինէ է (Տէս. Մ. Վ. § 2):

2, Իսկ եթէ շատ առարկաների վերայ է խօսուում, աւտում ենք թէ՛ նախադասութիւնը յոգնակի է:

3: Բառերի այն ձևը, որ գործ է ածուում միայն մի առարկայի վերայ խօսելիս կոչուում է Եղանակ:

4, Բառերի այն ձևը, որ գործ է ածուում շատ առարկաների վերայ խօսելիս կոչուում է յոգնակ:

5, Ազականն ու յոգնականը կոչուում են թիւ:

Վարժ. — 1, Եթէ թուում են զրուած յետագայ բառերը—ծառը-ծառեր, ծառերի—ծառի, ծառից-ծառերից, խօսում է—խօսում են, խօսում եմ—խօսում ենք և այլն: 2, Ի՞նչ են անում շները և այլն: (Տէս Մ. Վ. § 4.)— Ի՞նչ են սարեկները և այլն: (Տէս § 2.):— Ի՞նչպէս են աշտարակները (Տէս Մ. Վ. § 3.): Գրաւոր:

§ 6.

Ես երգում եմ:	Մենք երգում ենք:
Դու երգում ես:	Դուք երգում էք:
Շունը մի կենդանի է:	Շները կենդանիներ են:
Աշտարակը բարձր է:	Աշտարակները բարձր են:

1, Ստորոգեալն ու ենթական մի և նոյն թուում են զնուում:

2, Եթէ ստորոգեալը բաղկացած է գոյականից ու օժանդակ բայից, այն ժամանակը թիւը որոշուում է թէ՛ գոյականի և թէ՛ օժանդակ բայի փոփոխմամբ:

3, Իսկ եթէ ստորոգեալը բաղկացած է ածականից, թիւը ցուցանուում է միայն օժանդակ բայի փոփոխմամբ:

Վարժ, — Ես երգում եմ, դու, նա, մե՞նք, դուք նորա: Ես երգում էի, դու, նա, մե՞նք, դուք նորա: Շատ օրինակներ—քերանացի—Գրաւոր:

§ 7.

- 1, Մասերը ծաղկում են:
- 2, Մասերը ծաղկեցին:
- Մասերը ծաղկել են:
- 3, Մասերը կը ծաղկեն:
- Մասերը պիտի ծաղկեն:

Նախագասութիւնը կարող է ցոյց տալ, որ մի ինչ և իցէ բան (Տե՛ս Մ. Վ. § 7)

- ա) Պատահում է այժմ—ներկայ ժամանակում:
- բ) Պատահել է վաղուց—մի անցեալ ժամանակում:
- գ) Պիտի պատահէ յետոյ—մի ապագայ ժամանակում:

1, Քերականական լեզուով ասում ենք՝ թէ նախագասութիւնը զանուում է ներկայ, անցեալ, ոչպատահականակումը:

2, Ներկան, անցեալն ու ապանին ցուցանւում են ոչ թէ ենթակայի փոփոխմամբ, այլ բային զանազան ձևեր տարով:

3, Բայի այն ձևերը, որոնցով օրոշւում են ժամանակները, կոչւում են Բայի ժամանի:

4, Առանց օժանդակ բայի չի կարելի արտայայտել բայի բոլոր ժամանակները:

5, Իւրաքանչիւր ստորոգեալ ունի ոչ թէ միայն Բայը և ժամանի:

Վարժ. 1, Յետագայ բայերս—կարգալ, գրել, խփել, խաղալ, գնալ, ուտել, խմել, կռել, վարել, կասել, որսալ, եփել, մորթել, վաճառել և այլն գրէք ա) ներկայում, բ) անցեալներում, գ) ապանիներում:

2, Պատմեցէք ի վէպերս և պատմեցէք իրրև թէ անցքը անցնում է այժմ—ներկայում, պատահել է արդէն վաղուց—անցեալում, պիտի պատահի յետոյ—ապանում (տես Մ. Վ. § 7):

§ 8.

1, Ուսուցիչը պատմում է նա պատմում եմ: Աշակերտը լսում է Ինչ լսում էս: Ուսուցիչը պատմում է Հայկի վերայ. . . նա պատմում եմ նորս վերայ:

2, նա պատմում է՞ Մենք պատմում էնք: Ինչ պատմում էս Ինչք պատմում էս: Նա պատմում է Նոքա պատմում էնք: նա պատմեցի Մենք պատմեցինք: Ինչ պատմեցիր Ինչք պատմեցինք: Նա պատմեց Նոքա պատմեցին:

3, պատմել, հաւանել, կարդալ, մարդասալ:

4, նա, դու, նա, ինչ, դու, նա, գերանուններ են և ցոյց են տալիս առաջին, երկրորդ և երրորդ անձն, ուստի և կոչւում են անջանի գերանուններ (Տե՛ս Մ. Վ. § 5):

2, Բայի վերջաւորութեանց փոփոխիլը կոչւում է Խոնարհում: Բայը խոնարհում է: Բայը խոնարհւելով, ցոյց է տալիս թէ որ գէմքն է գործողը:

3, Բառի այն մասը, որ չի փոխւում, կոչւում է արմատ: Բայի արմատի վերայ յաւելացնելով էլ, ինչ ունի անջան վերջաւորութիւնքս, ասանում ենք բայի սկիւղ:

Վարժ. Ի՞նչպէս կը լինի յետագայ բայերիս սկիւղը—

գրում եմ, հաւանեցայ, կարդացել եմ, կը խաղամ և այլն: Արտագրեցէք Տ վէպերը, բայերը նշանագծեցէք և նոցա ներքև գրեցէք նոցա սկիզբը. պատմեցէք իբրև թէ զու, ես, նա, մենք, դուք, նոքա են գործողը: Նախ՝ բերանացի -- ապա՝ գրաւոր:

§ 9.

Հայկը սպանեց Ռէլին:
Ռէլը սպանեցաւ Հայկից:

1, Նախադասութիւնը ցոյց է տալիս նախ՝ որ են թական մի բան է գործում: (Տես Ս. Վ. § 4):

2, Երբ որ մի առարկայի հետ մի բան է անում, աւտում ենք թէ նա կրո՞ւ է: Նախադասութիւնը ցոյց է տալիս երկրորդ՝ որ ենթական ուրիշից մի գործողութիւն է կրում:

3, Այն բայը, որ ցոյց է տալիս թէ ենթական մի բան է գործում, կոչւում է ներգործական:

4, Այն բայը, որ ցոյց է տալիս թէ ենթական մի բան է կրում, կոչւում է կրողական:

5, Բայերի այդ զանազան տեսակ գործողութիւնքը կոչւում են սեռ:

6, Ուրեմն՝ ստորոգեալ բայը բացի թուից ու ժամանակից ունի նաև սեռ:

Վարժ:— Ի՞նչ է անում ոչխարի, թռչունի, սագի, ծառի, պտղի, տան, սեղանի, փայտի, տախտակի և այլն հետ (Ոչխարը մորթւում է, թռչունը բռնւում է և այլն):— Ի՞նչն է ուտում, խմում, եփում, թխում, խորովում, կարում, շինում,

անկում, վարում, հեղում, տըւում, և այլն: Ո՞վ է թաղադրում, նախատում, գովում և այլն: Ի՞նչ եղաւ Բէլի, Վարդանի, Ս. Ներսէսի և այլն՝ հետ:— Արտագրեցէք Տ վէպերից ներգործական—կրողական նախադասութիւններ:

§ 10.

Կատուն որսում է (Տէնէր):
Գայը կերաւ (չխորեց):
Ծառը բերում է (դրոշմ):

Եթէ ես ասէի «Կատուն որսում է», դու իմ միտքս լու չէիր հասկանալ. դու կը ցանկանայիր խմանալ թէ ի՞նչ: Այժմ ասա՝ կատուն ի՞նչ է որսում: Քանի՞ առարկաներ կան այժմ այս նոր նախադասութեան մէջ: Գորանից մէկը գործող է, միւսը չոր: Ո՞րն է գործողը, ո՞րը կրողը: Այսպէս նաև՝ Հայկը սպանեց (ով—ո՞ւմ)— Հրեայք խաչեցին — հայրս գնեց — քոյրս կարում է — թընդանօթը աւերեց — կրակը այրում է և այլն:

1, Կան այնպիսի ստորոգեալ բայեր, որոնց միտքը լրացնելու համար հարկաւոր է աւելացնել մի ուրիշ գոյական:

2, Այն գոյականը, որ գործ է ածւում ստորոգեալի միտքը լրացնելու համար, կոչւում է լրացողիչ կամ ինքնորոշիչ:

3, ենթական միշտ պատասխանում է հարցերիս ի՞նչ:

4, ներգործական բայերի ինքիբը պատասխանում է հարցերիս ո՞ւմ, ի՞նչ:

Վարժ.— Ի՞նչ գործիք է գործածում դարբինը, հիւսնր, դերձակը, աստղձագործը, որմաշէնը, պարտիզպանը, երկրագործը, կոշկակարը, ձկնորսը, որսորդը և այլն: Ի՞նչ է կրում էջը, ձգում ձին պահպանում շունը, աղում մլաղացը, շանթեց կայծակը, բերում նամակաբերը, շոգենաւը, ժամանակը, գարունը, ձմեռը, քամին, ծերութիւնը, պատերազմը և այլն և այլն: Ի՞նչ է ուտում մարդը, շունը, այծը, գորտը, արտոյտը, աքաղաղը, ձուկը և այլն: Ո՞ր հանեց Մովսէս Նզիպոտից, — օժեց Մարիամը, — աշակերտեց Յիսուսը, — թաղեց Տորիթը, — սպանեց Ապէնը և այլն: Ի՞նչ շինեց Սողոմոնը, — գտաւ Կողմբոսը, — նուաճեց Արամը և այլն:

§ 11. — Ս.

- Ըրեայք խաչեցին Յիսուսին:
- Յիսուս խաչուեցաւ Հրեաներէն:
- Թնդանօթը աւերեց եկեղեցին:
- Եկեղեցին աւերեցաւ Բարսեղից,

1, Ներգործական նախադասութիւնը կարելի է արտայայտել նաև կրաւորական նախադասութեամբ: Այդ դիպուածում ներգործականի խնդիրը կրաւորականումը դառնում է ենթակայ, իսկ ենթական — խնդիր:

2, Կրաւորականի խնդիրը պատասխանում է հարցերիս ո՞ւմնէն, ինչնէն:

Ի՞նչ հոգնեց ազատ ես:
 Եւազակը Բարսեղի փախաւ:
 Ջուր հանիր հորէն:
 Մի հեռանար քո հայրենի անտառներից:
 Մա շնորհակալ եղաւ իւր հորէն:

Բացի կրաւորական բայերից, նոյն ո՞ւմնէն, ինչնէն նաև հարցերովը կարող են խնդիր առնել նաև ներգործական ու օժանդակ բայերից կազմուած ստորոգեալները:

Վարժաւելիս: Ինչնէն ի՞նչ ումնէն է հեռանում առաքինին, ճշմարտասէրը, չափաւորը, աղնիւր, թուլասիրտը և այլն: Ինչնէն է շինուում տունը, սեղանը, պատահանը, դանակը, ակնոցը, մատանին, սպարանջանը, կաթսան, կթաւորը, մոխրամանը և այլն: Ի՞նչնէն են գործուում թաւիշը, չուխան, կտաւը, և այլն:

— Ումնէն է վախում (երկնչում, երկիւղ քաշում) գողը, ծոյլ աշակերտը, նապաստակը, գորտը, վառիկը, գառը, սարեակը, մեղուն, գայլը, ձին և այլն: Որտեղնէն են բերում խնձոր, տանձ, կաղամբ, խաղող, աղ և այլն: Ո՞ր տեղից են բերել կարտոֆիլը, մետաքսը, ծխախոտը և այլն:

§ 12.

- Աստուած ներում է զՂաչոյաներին:
- Աշակերտը պատասխանում է աստուայէն:
- Մի գպչեր մեր հայրենի օրէններին:

Խնդիրը կարող է պատասխանել նաև հարցմանցս
մէջ, ինչէ՞:

Վարժաւիւնս: — Ինչէ՞ է կարօտ քաղցածը, ծարաւին,
աղքատը, աղէտը, տարագիրը, պանդուխտը
և այլն: — Ո՞ւ՞մ է հարկաւոր կերակուրը, ջուրը,
զգեստը, խոտը, գէշը, միտը և այլն: Ինչէ՞ է
արժանի մշակը (իւր վարձին), յանցաւորը, ար-
դարը, ջանասէրը, ծոյլը և այլն: — Ո՞ւ՞մ քա-
րուկեց Քրիստոսը, յաղթեցին Հայերը, յաղթեց
Արամը, Տիգրանը, Վահանը, Հայկը, և այլն:
Ո՞ւ՞մ է ծառայում զինուորը — սպառնում պա-
տիժը — հնազանդում ծառան — ընդդիմադրեց
Վարդանը և այլն: Ո՞ւ՞մ ենք հարկ, ողորմու-
թիւն և այլն տալիս: —

Մի հաւատար հաշտուած թշնամուն: — Ամեն
մէկին հաւատար թեթեամուտիւն է, ոչ ոքին
չհաւատար՝ յիմարութիւնս — Երկրաւոր ուրա-
խութիւնները (բարիքը) ոչ ոքին չեն մնար: Ազաւա-
րին իւր ձայերը զեղեցիկ են երևում: Աշխարհս քաջերինն է, — Բժիշկը եկաւ հի-
ւանդին այցելութեան: —

§ 13.

Ես գրում եմ գրքով:

Ես պարծենում է իւր եղբօրով:

Երկիրս լի է Աստուծոյ Բարութիւնսերով:

Խնդիրը կարող է պատասխանել նաև հարցմանցս
մէջ, ու՞մն է՞:

Վարժ. — Ի՞նչով է բանում մշակը, հիւանը, որմաշէնը,
դերձակը, երկրագործը, պարտեզպանը, ուսուց-
նանկը և այլն: Ինչով ես խօսում, գրում, տես-
նում, լսում, քայլում, ուտում, հոտհոտում,
չնչում, ձաշակում, խածանում, բռնում և այլն:
Ինչով են զարգարում տունը, — մորթում ոչ-
խարին, — աղում ցորենը, — լուանում շապիքը, —
կարում զգեստը: Ինչով է ծածկուած կրիայի,
կոկորդիլոսի, շան, կապիկի, արջի, ձիան, ծտի
և այլն մարմինը: Ինչով է շնչում մարդը, ձուկը,
գորգը, ձին և այլն: Ի՞նչ ենք անում ակա-
նատով, որոգայթով, թակարգով, կափուլով,
ծուղակով, վարմով, ցանցով, կարթով, ու-
կանով: և այլն:

§ 14.

Չկները լողում են ջուսմը:

Եթովբացեք բնակում են Ափրիկայումը:

Արշակունիս մեղ չկայ:

Խնդիրը կարող է պատասխանել նաև ո՞ւր, ո՞ր պեղ, ին-
չո՞ւմ, ու՞մն է՞ կամ ինչէ՞, ո՞ւմ մեջ հարցերիս:

Վարժաւիւնս: — Ո՞ր տեղ էք ձաշ ուտում, ուսանում, քը-
նում, ապրում, լողանում, խաղում և այլն: — Ո՞ր
տեղ է բանում հիւանը, դարբինը և այլն: Ինչէ՞
մեջ է կասում ցորենը, լողում ձուկը, քնում արջը,
երեխան, շինում կիրը պնակը, և այլն: Ո՞ր տեղ է
վաճառում միտը, չուխան, խնձորը, արածում
կովը, տպում գիրքը, գործւում թաւիչը, նա-

Հատակուեցաւ Վարդանը և այն և այն: Ինչո՞ւմ է պատրաստուում սուրճը, թէյը, ապուրը, թանը, տապակածը և այլն:

§ 15.

Ընդհանուր վարժ: — Նախ՝ բերանացի, ապա՝ գրաւոր: Կազմեցէ՛ք յետագայ բայերից նախադասութիւններ և լրացրէ՛ք նոցա միտքը:

Ռ՞նչ, Ի՞նչ:

Ճիներ, աւերել, առնել, բռնել, տանել, կրել, ձգել, փոխել, լաւացնել, կտրել, դատարկել, մեղմել, խաղաղացնել, պատրաստել, նկարագրել, նկատել, պատմել, հակել, որոնել, գրգռել կողոպտել, վերաւորել, մտաբերել, յիշել, յորդորել, քաջալերել, հրապուրել, մերժել, խնդրել, աղաչել, վարձատրել:

Ի՞նչն, ո՞ւմն, ո՞ր տեւն:

Զրկուիլ, հրաժարել, արքայութիւն, փախչել, արձակել, ազատել, փախուստ տալ, օգուտ քաղել, երկնչել, վախել, երկիւղ կրել, ամաչել, թալկանալ, մոլորել, յոգնել, ձանձրանալ, առնել, խլել, կտրել, կտրուել, սրբել, մաքրել, փրկել, գայթակղել և այլն և այլն:

Ո՞ւմ, Ի՞նչ:

Գործակից, միջամուխ, ձեռնառու, վշտակից, օգնական,

բաժանորդ և այլն լինել, պէտք ունենալ, արժանանալ, քնասել, ծառայել, օգնել, տիրել, իշխել, ասել, հրամայել, նմանել, սպառնալ, հետեւել, հաւատալ, պատասխանել, յաջողել, պաշտպան կանգնել, ընդդէմ կենալ, հովանաւոր լինել, ցոյց տալ, փոխ տալ, խփել, զարկել, սպասել, նայել. սեխն—սպիտակին, —դեղնին—կարմրին և այլն տալ, վաճառել, տալ, դնել, առնել, և այլն և այլն:

Ի՞նչով, ո՞ւմով, ո՞ր տեղով:

Սպանել, կոտորել, տեսնել, լողալ, դնալ, անցանել, թրուել, լսել, շինել, տիրել, տալ, յաղթել, ասել, կարգալ, գնալ, խփել, և այլն:

Ի՞նչմ, ո՞ւմմ, ո՞ր տեղ:

Լողալ լինել, տեսնել, բնակիլ, բռնել, շինել, կարել, պարել, և այլն և այլն:

§ 16.

Մտախոհ. — «Փողոցով մի անասուն է վազում»: Ի՞նչ անասուն: Որպէս զի դուք իմանաք, հարկաւոր է ճշտութեամբ պատշաճ: Եթէ ես ասեմ. «մի կախարչի անասուն», այն ժամանակը ի՞նչ չի կարող լինել, (գորդ, ձուկը, թրուչուն և այլն): Ես կարող եմ առաւել ճիշտ որոշել. «մի չորստանի կաթնակեր անասուն»: — Այժմ նա ի՞նչ անասուն է կարող լինել: — Ինչու նա չի՞ լինիլ կապիկ: Ես առաւել եւս ճիշտ կորոշեմ—«մի շուն»: Եւս առաւել —մի որսի շուն, մի սև որսի շուն, իմ զբացուս սև որսի շունը, իմ զբացի Յակոբին սև որսի շունը:

Մարդը մուրում է հաց: (Իւրաքանչի՞ր. ուրեմն ի՞նչպիսի մորդ):

Աղչաւ մարդը մուրում է հաց:

Աղչաւ մարդը մուրում է եւր օրէկս հացը:

Սօսին մի ծառ է:

Երէմյն սօսին մի ծառ է:
Երկայն սօսին մի փէղէշէ՛ ծառ է:

- 1, Նախագասուեթեան մէջ իբրև ենթակայ, խնդիր ու ստորոգեալ վարեող գոյականները կարող են առաւելել ճիշտ որոշել նախ՝ ածականով:
- 2, Այդ ածականը ցոյց է տալիս ենթակայի, խնդրի ու ստորոգեալի ինչպիսի լինելը և կոչում է որոշիչ բառ:
- 3, Որոշիչ ածականը միշտ նախագասուում է իւր գոյականին:

Վարժութիւնք: —

ա) Որոշիչէ՛ Կնեւումն:

— Խնձորը վնաս է: — քարերը կոչւում են խիճ: — ջուրը կոչւում է գետ. ջուրը կոչւում է լիճ: — գաշտերը պըտուղ չեն բերում: — աշակերտը սովորում է: — ջուրը դովայնում է և այլն և այլն:

բ) Որոշիչէ՛ Կարգեալը

Սեղանը խնչպիսի՞ կարասի է. (օգտուէտ): Արագիւր ինչպիսի՞ թռչուն է (ծահճային): Չուրը ինչպիսի՞ խմիչք է: Միսը ինչպիսի՞ կերակուր է և այլն և այլն:
Երկիրս — մարմին է: Անասունը — արարած է: Գողիաթը — մարդ էր: Կատուն — կենդանի է: Հայաստանը — երկիր է: Արձիճը — մետաղ է: Երկաթը — մետաղ է: Շաքարը — համ ունի: Յովսէփը մի — երիտասարդ էր և այլն և այլն:

գ) Որոշիչէ՛ Խնդիրը:

Դարբինը կուում է — դամ: Ատաղձագործը շինում է — սեղան: Ճնձրուկը ուտում է — թիթեաներ: Կոլմբոսը գտաւ մի աշխարհ: Լուցկին ունի — հոտ: Քացախը ունի — համ: Խնձորենին բերում է — խնձոր:

դ) Որոշիչէ՛ Կնեւումն ու ստորագեալը:

Երէմյն ու Բարսէ սօսին մի (փէղէշէ՛) ծառ է: — ածուխը մի — հանք է: — մրջուներ մի — միջատ է: — ճնձրուկը մի — թռչուն է: — Վագրը մի — գայլան է: — Փիղը մի — անասուն է: Չուրը մի — խմիչք է: — Վարդը մի — ծաղիկ է: — Աղաճանդը մի — քար է: — Մուկը մի — կենդանի է և այլն և այլն:

§ 17.

Թագաւորը գրել տուաւ պատմութիւնը:
Ո՞ր թագաւոր: — Ո՞ւմ պատմութիւն:
Վաշտաշէ՛ թագաւորը գրել տուաւ Հայոց աւգի պատմութիւնը:
Հերոսարատը այրեց տաճարը (նփեսայի):
(Վարդի գոյնը կարմիր է:
(Աստուծոյ) երկիւղը (խնայողութեան) սկիզբն է:

- 1, Նախագասուեթեան մէջ իբրև ենթակայ, ստորոգեալ և խնդիր վարեող գոյականները կարող են առաւելել ճիշտ որոշել նաև փոյակա՞ծով:
- 2, Որոշիչ գոյականը պատասխանում է հարցերիս ո՞ր, ի՞նչ, ո՞ւմ, ինչի՞:

3, Որոշիչ գոյականը միշտ նախադասուում է իւր գոյականին:

Վարժ: — Ու՛մ ոտներն են կճղակաւոր, սմբակաւոր, մազոտ և այլն: Տունը ի՞նչ տանիքով է ծածկուում (տախտակի և այլն): Հայրդ ի՞նչ զգեստներ ունի (ճանապարհի, տան և այլն): Ո՞ր Մակեդոնացին յաղթեց Դարեհին: Ո՞ր ատաղձագործ շինեց այս սեղանը: Ո՞ր դերձակ կարեց քո զգեստդ: Ո՞ր լեառն է կոչուում նաև Մասիս: Տան մէջ ի՞նչ դռներ կան: Ի՞նչ շիշեր են լինում (գինու, ջրի և այլն): Ինչպիսի՞ գրայներ են լինում (թէյի և այլն): Ինչպիսի՞ բաժակներ են լինում և այլն:

Ի՞նչ կրնանակէ աղաւնիների բունը և բունի աղաւնիները—հօր տունը և տան հայրը—ամրոցի տէրը և տիրոջ ամրոցը—ճաղիկների փունջը և փունջի ճաղիկները—կարասի գինին և գինուն կարասը—Տիգրանեանց Արամը և Արամեանց Տիգրանը և այլն և այլն: Գոցանից ո՞րն է որոշողը, ո՞րը որոշողը:

Մահը ի՞նչն եղբայրն է (քնի): Ո՛ւ՛մ (Քրիստոսի) աբիւն է սրբում մեր մեղքերը: Պատիժը ի՞նչն է հետևանքն է:—(Ո՛ւ՛մ) արիւն է կարմիր—սպիտակ և այլն:

Արտագրեցէք չ յօդուածները և որոշիչ գոյականները նշանագծեցէք: Որոնեցէք չ յօդուածներից ենթականեր—ստորոգեալներ—խնդիրներ իւրեանց որոշիչ գոյականների հետ:

Ե.

Մովսէս ազատեց իւր ազգը գերութիւնից:
Ես ազատեցի ի՛մ ազգը գերութիւնից
Դու ազատեցիր **քո** ազգը գերութիւնից:
և այլն և այլն:

Նախապատ. «Մովսէս ազատեց իւր ազգը գերութիւնից:» «Իւր» այստեղ ցոյց է տալիս, որ ազգը Մովսէսինն էր և ոչ թէ ուրիշներ: «Իւր» մի ածական գերանուն է ինչո՞ւ: Նա կոչուում է սպայական գերանուն. ինչո՞ւ: Այժմ երևակայիր թէ դու ես Մովսէսը. այն ժամանակը ի՞նչպէս կասէիր: «Ես ազատեցի ի՛մ և այլն» «Ի՛մ» նոյնպէս ստացական գերանուն է. ինչո՞ւ: Այսպէս նաև՝ քո, նորո, մեր, չեր, նոյս, իւրեանց ազգը:

1, Ի՛մ, քո, նորո, իւր, մեր, չեր, նոյս, իւրեանց, ածական գերանուններ են: Նոքա ցոյց են տալիս թէ առարկան ո՛ւմն է, ո՛ւմ սպայատու է, ուստի և կոչուում են ստացական գերանուններ:

2, Գոյականը որոշուում է նաև ստացական գերանուններով:

Բ.

Այս գիրքը Յովսէփինն է:
Այդ գիրքը Յակոբինն է:
Այն գիրքը Արշակինն է: և այլն:

մի քանի շներ, Տէգանի մարդիկ: Ի՞նչպէս է լինում ամէն Տէ վագր, իրաւունք իւր վիղ և այլն: Իրաւունք իւր բան ունի իւր ժամանակը: Նորա աշակերտներից Տէ քանիսը այնտեղից հեռացան: Մի քանի լիւներ հասնում են մինչև հինգ վերսաբարձութեան: Եսայ աշակերտներ ծոյլ են լինում: Եսայ թուշուներ ձուն ուտում է: Իրաւունք իւր ազնիւ գործ արժանի է դովասանքի: Ոչ Տէ անասուն խօսել չգիտէ և այլն:

3, Քանի էրորդ նստարանի վրայ ես նստած — վերելից — ներքեկից: Քանի երո՞րդ մարդն է Ալբանը: Քանի երո՞րդ պատգամն է արգելում սպանութիւնը: Քանի երո՞րդ ամիսն է ապրիլը — սեպտեմբերը — դեկտեմբերը և այլն: Տարուան քանի երո՞րդ օրն է ապրիլի 6-ը — օգոստոսի 5-ը — հոկտեմբերի 24-ը և այլն: Բերանացի: Գրաւոր:

§ 20.

Քաղաւած. — Ա.

1, Մենք բննելով նախադասութեան կազմութիւնը, ծանօթացանք յետագայ զանազան տեսակ բառերի հետ.

1, Բոյսիւն — հայր, մայր, ծառ, տուն և այլն:

2, Ածական — ուրախ, բարձր, չար, բարի և այլն:

3, Թուական — ա, Բանականութիւն — մի, երկու, երեք և այլն:

բ, Անորոշ — մի քանի, շատ, իւրաքանչիւր և այլն:

գ, Իրական — առաջին, երկրորդ և այլն:

4, Իրանական — ա, Անշնական — ես, դու, նա և այլն:

բ, Սպաղանական — իմ, քո, նորա և այլն:

գ, Յուրանական — այս, այդ, և այլն:

5, Բայ — ա, Ներգործական — երգել, սպանել, կարդալ և այլն:

բ, Կրտսերական — երգել, սպանել և այլն:

2, Այստեղ կրկնում են վերև. §§ 3, 4, 9, և 19 յիշածները:

3, Ի՞նչ է գոյականը, ածականը, թուականը և այլն:

4, Որովհետև նախադասութիւնը կազմում է այդպիսի զանազան տեսակ բառերից, ուստի և այդ տեսակ տեսակ բառերը կոչւում են նախադասութեան Տանիք կամ գրաբար՝ Տասունք Բանի:

Մենք տեսանք, որ այդ մասանց բանի վերջաւորութիւնը փոփոխւում են, այսինքն՝ այդ բառերը նախադասութեան մէջ երևում են զանազան ձևերով:

Այն բառերը, որոնք փոփոխւում են իւրեանց վերջաւորութիւնը, կոչւում են փոփոխական: Գոյականը, ածականը, թուականը, գերանունն ու բայք փոփոխական են: — Աարժութիւնք:

Վան և այնպիսի բառեր, որոնք ոչինչ փոփոխմանց չեն ենթարկւում, ուստի և կոչւում են անփոփոխական: — հետ, էլ, երբ, արդեօք, թէ և այլն:

5, Մենք տեսանք նաև, որ գոյականը գործ է ածւում ա, իբրև ենթակայ — ո՞վ, ի՞նչ հարցմունքներով:

բ, իբրև խնդիր կամ լրացուցիչ բառ.

1, ու՞մ, ինչե՞ն 2, ու՞մ, ի՞նչ 3, ումնից, ինչե՞ց 4, ումնով, ինչով 5, ումնո՞ւմ, ինչո՞ւմ	}	հարցմունքներով.
---	---	-----------------

գ, իբրև որոշիչ — ո՞ւմ, ինչե՞ն, ո՞ր, ի՞նչ հարցերով:

Գոյականի այդ եօթը ձևերը, որոնք պատասխանում են վերոյիշեալ եօթը հարցերին, կոչուում են հոլով: Աւրեմն՝ եօթը հոլով կայ՝

- 1, ո՞վ, ի՞նչ հոլով — ենթակայ.
- 2, ո՞ւմ, ինչե՞ր, ո՞ր, ի՞նչ հոլով — որոշչ,
- 3, ո՞ւմ, ինչե՞ր հոլով
- 4, ո՞ւմ, ի՞նչ հոլով
- 5, ումնի՞ց, ինչնի՞ց հոլով
- 6, ումնո՞ւմ, ինչո՞ւմ հոլով

} խնդիր.

Ո՞վ վերաբերում է շնչաւոր աւարկաներին, ի՞նչ անշունչներին:

Վարժուելիւնք. — Հոլովեցէք յետագայ բառերս. փայտ, երկաթ, կաւ, բամբակ, թուղթ, կաշի, հաց, գինի, սեղան, աթոռ, գրիչ, հայելի և այլն: Ախարձուները ուղղուում են նախագասութեանց մէջ:

6, Այդ հոլովները քերականական լեզուով կոչում ենք այսպէս:

- Ո՞վ, ի՞նչ հոլով — Ուղղական,
- Ու՞մ, ինչե՞ր հոլով — Տրական,
- Ո՞ւմ, ի՞նչ հոլով — Հայցական.
- Ումնի՞ց, ինչնի՞ց հոլով — Բացառական.
- Ումնո՞վ, ինչո՞վ հոլով — Գործիական.
- Ումնո՞ւմ, ինչո՞ւմ հոլով — Ներգոյական:

Բ.

Տրական և Աւտան.

Արշակին հիւ անդութիւնը սաստիկ է:

Թթուն Արշակին վնաս է:

Ծառին տերեւները կանաչ են:

Թրթուրը ծառին վնաս է:

1, Ո՞ւմ, ինչե՞ր հոլովը երկու կերպ է գործածուում: նախ ի և ինչեր և երկորոգ՝ իբրև որոշչ բառ:

2, Երբ որ ո՞ւմ, ինչե՞ր հոլովը գործ է անուում իբրև խնդիր կոչուում է Տրական հոլով: Իսկ երբ որ գործ է անուում իբրև որոշչ կոչուում է Աւտան:

Վարժուելիւնք: — Որոնեցէք յետագայ նախագ. սեռական ու տրական հոլովները. տե՛ս §§ 12, 15 և 17: — Երեխային ձայնը և տո՛ւր երեխայինս Արամը յաղթեց Նիւքարին և Նիւքարին զօրքերը փախան: Ողորմեցէք աղքատներին և աղքատներին թշուառութեանց մի դարման տանել: Աստուած կերակրում է մեզ և մեր կերակուրը տալիս է Աստուած և այլն: Որոնեցէք X յօդուածներից սեռական — տրական հոլովներ:

Գ.

Վերև տեսածներից պարզ երևում է, որ շնչաւոր աւարկաներումը

- Ուղղական համապատասխանում է ո՞ւմ հարցմանս.
- Աւտանը } » } ո՞ւմ »
- Տրականը } » } ումնի՞ց »
- Հայցականը } » } ումնո՞վ »
- Բացառականը } » } ումնո՞ւմ »
- Գործիականը } » } »
- Ներգոյականը } » } »

Իսկ անշունչներումը

- Ուղղականը } համապատասխանում են ի՞նչ հարցմանս.
- ու } »
- Հայցականը } »

Աւետանան	}	»		
ու		»	ի՞նչի՞	»
Տրտմանը	}	»		
Բայտատանը		»	ի՞նչի՞ց	»
Գործիանան	}	»	ի՞նչով	»
Ներգոյանան		»	ի՞նչով	»

ի.

Աետի խնդիր — Բնու-Լեան խնդիր:

Հրեայք խաչեցին Յիսուսին:

Յիսուս խաչուցաւ Հրեաներից:

Վայէնը սպանեց Աբէլին:

Աբէլը սպանուցաւ Վայէնից:

1. Ներգործական նախադասութեան հայցական խնդիրը կրաւորականումը փոխուում է բացառական:

2. Այդ հայցական ու բացառական խնդիրները կախած են իւրեանց բայի սեռից. եթէ բայը ներգործական է, խնդիրը դնուում է հայցականում, իսկ եթէ կրաւորական է, խնդիրը դնուում է բացառականում:

3. Այդ պատճառով և ներգործական բայի հայցական խնդիրը և կրաւորական բայի բացառականը կոչուում են «ետի խնդիր». իսկ մնացած հոլովներով խնդիրները — Բնու-Լեան խնդիր, որովհետեւ դրքա կախած են ո՛չ թէ բայի սեռից, այլ բնութիւնից:

Որդեակ, լսի՛ր քո հօր խոստանքն:

Արամը Նիւսարին յաղթեց:

Տիգրան երկրորդը Ասորոց երկնն տիրեց:

Մի քանի ներգործական բայի սեռի խնդիրը դնուում է տրական հոլովում:— Որոնեցէ՛ք խնդիրներ յետագայ բայերիս համար. յաղթել, տիրել, խնդրել, ասել (անուանել), աղաչել, սպասել, խփել, զարկել, լսել (հնազանդել), նայել:

Ողորմութիւն արէ՛ք սղ. քատնելին:

Հողագործը երկիրը վարում է արօրով:

Ներգործական բայը կարող է մի և նոյն ժամանակ և բնութեան և սեռի խնդիր առնել:

Վարժ. — Որն է յետագայ նախադ. մէջ սեռի, ո՞րը բնութեան խնդիր: Թէոդոր Պապին Հայաստանի վերայ թագաւոր կանգնեց: Նա իմ ընկերիս ստախոս անուանեց: Նոքա Վահանին իշխան ընտրեցին: Հայրս ինձ մի գիրք ընծայեց: Երկիրը մարդկանց կերակուր է շնորհում: Գինին քամում են խաղողից: Նա փայտից մի տուն շինեց: Սրբենք մեր լեզուները բամբասանքից: Արեգակը լուսաւորում է երկիրս իւր ճառագայթներով: Միսը եփում են կաթսայում: Մետաղները հայում են բովում և այլն և այլն:— Նս տուի ո՞ւմ, ի՞նչ, որտե՞ղ, ինչո՞վ, ինչի՞ց: Նա տեսաւ ի՞նչ, ինչո՞վ, ո՞րտեղ և այլն: Բերանացի — զրաւոր:

(1) Որոնեցէ՛ք յետագայ բայերիս մի սեռի և մի բնութեան խնդիր. տալ, շնորհել, ընծայել, բերել, թողել, գործել, աւետել, հաղորդել, յայտնել, զոհել, առաքել, պատմել, խլիլ, առնել, ազատել, փրկել, ստանալ, սպանել, զրիլ և այլն և այլն. և որոշեցէ՛ք ո՞րն է բնութեան, ո՞րը սեռի խնդիր: Նախ բերանացի, յետոյ զրաւոր:

§ 21.

Ա.

Հովելը փչում է իւր սրինգը:—Ո՞ւր, ո՞ր տեղ:

Հովելը փչում է իւր սրինգը լեռան վերայ:

Ոչխարները փազում են:—Ո՞ւր, որտեղ ո՞ւր:

Ոչխարները փազում են գէպի ջուրը:

Իսրայելացիք գաղթեցին Հրեաստան:—Ո՞ր տեղից:

Իսրայելացիք եղիպտոսից գաղթեցին Հրեաստան:

Գնում ենք Ամերիկա:—Ի՞նչու:

Ամերիկա գնում ենք ծովով:

Քրիստոս մկրտուեցաւ:—Ո՞ւր, ո՞րտեղ, ի՞նչու, ի՞նչու մէջ:

1, Բացի խնդրից ու որոշիչ բառերից կան նաև նախադասութեան ուրիշ երկրորդական անդամներ:

2, Մենք կարող ենք որոշել նախ՝ ստորոգեալի գործողութեան տեղն ու ուղղութիւնը կոչուում են տեղական պարագայ:

3, Տեղական պարագաները պատասխանում են հարցերիս՝ ո՞ւր, ո՞ր տեղ, ո՞ր տեղից, ի՞նչու, ի՞նչու:

4, Տեղական պարագաները կարող են լինել՝

1, Մի գոյական ա) ճրակ. ու Բայ. հոլովներում գործողութեան ուղղութիւնը ցուցանելով: (1)

բ) Գործ ու ներգ. հոլովներում գործողութեան տեղը որոշելով:

2, Գոյականը մի այնպիսի բառի հետ, որ ցոյց է տալիս նորա ու բայի մէջ եղած յարաբե-

(1) Գէպի ջուրը, վերադառնում են տուն և այլն. տրական հոլովներ են:

ութիւնը: Այդ բառը քերականորէն կոչում ենք նախորդ կամ նախորդ-էն:

Բ.

Ես մտայ ներս: Ես նստեցի վերև:

Նա որ-որ գնաց: Նա նստեց ներս:

Տեղական պարագաները կարող են լինել երբորտ այնպիսի բառեր, որոնք յատկապէս վարում են գործողութեան պարագաները բացայայտելու համար:—Այդ բառերը կազմում են մի առանձին մասն բանի, որ կոչուում է ճակէպ: Ներս, որ-որ, վերև, ներս մակբայներ և այլն: Վարդ-էն:

1, Ո՞ր տեղ (ուր) է կենում քարայծը, եղջերուն, ջորին, ճահճային թռչունները, կոկորդիլոսը (տիսեռը), կէտը և այլն: Ո՞ր տեղ է դանում երուտողէմը, Կ. Պ. լիսը, Վանը, Մուշը, Մօսկուան և այլն: Ո՞ւր ծնաւ Քրիստոսը—մեռաւ Վարդանը—Ղևոնդ երէցը և այլն: Ո՞ր տեղ ստացան Իսրայելացիք աստը պատգամը և այլն:—Յետագայ բառերից կազմեցէք նախադասութիւններ, որոշելով գործողութեան տեղը:—Ամպեր ծփել—խեց գետին բնակել—կարիճ թաքչել—ճնճղուկ ձուածել և այլն և այլն:

2, Գէպի ո՞ւր է մադլելով ելանում սկիւրը:—Ո՞ւր են չում ծիծեռնակներ—գնում ծուխը—գաղթեցին Իսրայելացիք—գնում քարոզիչը, գինուորը, քահանան, ուսուցիչը և համբարձաւ Յիսուս և այլն: Հացարար հաց դնել: Մրդաց ցորեն ածել: Հնձանահար խաղող ածել և այլն:

3, Ո՞ր քաղաքն է փչում քամին: Ո՞ր տեղից ես գալիս: Ամեն բարի բան ծագում է Աստուածանից:—Ամպերից թափւում է անձրևը: Աստուած մեր վերայ նայում է երկնքից: Արտասահմանից բերում են զգեստեղէններ և այլն: Տերևները թափւում են—Կարտոֆիլը բերին Եւրոպա:—Մետաքսը բերին— և այլն:

4, Ո՞ր գետի վերայ է ընկած Տիֆլիսը, Ա. Պ. Բուրգը, Երևանը և այլն: Ո՞ր լեռան Տօք է գտնւում Եջմիածինը: և այլն: Ո՞ր տեղ են բուն գնում ծիծեռնակները, ճընձղուկները, կաքաները, ագռաւները, աղաւնիները և այլն: և այլն: Ո՞ր գետի մօտ եղաւ Վարդանանց պատերազմը: Մարգարիտը ո՞ւմ առաջ չպիտի ձգենք:—Նայիր վերև և յուսացիր Աստուծոյ վերայ: Աստուած մեզ սեննում է ամէնուրեք (ամէն տեղ): Յոսոփ գնացէք, յէփ մի մնաք: և այլն և այլն:

5, Որոնեցէք X յօդուածներից տեղական պարագայք:

6, Կազմեցէք նախադասութիւններ և գործ դրէք յետադայ—մտկայներս. վերև, ներքին, յառաջ, յետ այստեղ, այնտեղ, հեռի, մօտ, ներս, դուրս, աջ, ձախ, մի տեղ, ոչ մի տեղ, ամենուրեք և այլն:—Հեռուից, մօտիկուց, ներքևից, վերևից, այստեղից, այնտեղից և այլն:

§ 22.

Ա.

Ե՞րբ ենք ուտում կարմիր ձու:

Զապիկն ուտում ենք կարմիր ձու:

Ե՞րբ է եկեղեցին զարդարւում ծաղիկներով:

Մողէսաբլուրին եկեղեցին զարդարւում է ծաղիկներով:

Ե՞րբ չենք ուտում միս: Ե՞րբ են ծաղկում ծառերը: Ե՞րբ են տերեւթափ լինում ծառերը: Ե՞րբ է ձիւն գալիս, օթ լինում, դեարը պառչում: Ե՞րբ ենք քնում, բանում և այլն:

Երկրորդ՝ կարելի է որոշել ստորագեալի գործողութեան ժամանակը: Ուստի գործողութեան ժամանակը կոչւում է ժամանակահատիկ պարագայ:

1, Ժամանակական պարագան պատասխանում է նախ հարցմանս է՞րբ:

2, Ժամանակական պարագաները կարող են լինել նախ լոկ փոյտին —

ա) Հայց. հարցում — ձմեռը, ամառը, գիշերը, ցերեկը և այլն (1)

բ) Նշիչ. հարցում — զատկին, ծաղկապարդին, մեծ պասին, գարնան, աշնան և այլն (2)

Բ.

Քրիստոսի կեանքը տևեց 33 տարի: Ո՞րչափ ժամանակ:

Շատ տարիներ սպասեցինք մեր փրկութեանը:

Երկիրս պտտում է արեգակի շուրջը 12 ամսում: —

Ո՞րչափ ժամանակում:

Գարունը սկսւում է Մարտ ամսից: Ո՞ր ժամանակից:

Ամառը շարունակւում է ֆինչու օգոստոսը:

Աշունքից յետոյ գալիս է ձմեռը:

Խօսելից աստուծ մտածիր:

Այսօր երկուշաբթի է. վաղը կը լինի երեքշաբթի:

(1) Գրաբարից մնացած հայցականներ են — զգիշերն ամենայն եւ այլն:

(2) Նոյնպէս գրաբարից մնացած — յաշնան, 'ի գարնան եւ այլն:

- 1, Ժամանակական պարագաները կարող են լինել երկ-
րորդ՝ Գոյական
 - ա) Որոշիչ Լեռանդանի հետ — մի օր, երկու ամիս և այլն:
 - բ) Որոշիչ Գոյականի հետ — Մարտ ամսուհը և այլն:
 - գ) Որոշիչ ամսականի հետ — Շատ տարիներ և այլն:
 - դ) Մի նախորդի հետ — Աշունքից յետոյ և այլն:
- 2, Ժամանակական պարագաները կարող են արտայտուել
երրորդ՝ ժամանակական հաշիւայնորով Այսօր, վաղը, ե-
րէկ և այլն:
- 3, երբ որ գործողութեան տեղը որոշուում է գոյակա-
նով մի ուրիշ որոշիչ բառի հետ, այդ դիպուածում
գոյականը դնուում է՝
 - ա) Հայց. հոլովում — 33 տարի, շատ տարիներ և այլն: (1)
 - բ) Ներգ. հոլովում — 12 ամսուհը, 5 օրուհը և այլն:
 - գ) Բայց. հոլովում — Մարտ ամսից և այլն:
- 4, Ժամանակական պարագան պատասխանում է նաև
հարցմանցս՝ — Որչափ ժամանակ, որչափ ժամանակում,
որ ժամանակից, մինչև որ ժամանակ:

Գ.

Վարժաւելեանք. Որչափ ժամանակ տեւեց Հայկազանց, Ար-
շակունեաց, Բագրատունեաց իշխանութիւնը: Որ-
չափ ժամանակ է շարունակուում ձմեռը, ամառը և
այլն — ապրեց Մաթուսաղան, Աբրահամը և այլն:
— Թափառեցին Հրեայք անապատումը — Ղա-
զարոսը մնաց գերեզմանումը — Թագաւորեց Տըր-
դատը, Վաւաճապուհը և այլն: — հովուեց Գրի-
գոր Կուստուրիչը, Սահակ Պարթևը և այլն: Քա-

(1) Կրարարից մնացած:

նի՞ օրումն է լուսինը պտտուում երկրիս շուրջը: Քա-
նի՞ ժամում, լոպէում, վայրկենում է մի շրջան
անում ժամացուցի սլաքը: — Ո՞ւմ ժամանակից է
սկսուում Հայկազանց թագաւորութիւնը, Հայոց
մատենագրութիւնը և այլն: Ռուսաց Կովկասի վե-
րայ տիրապետիլը: Հայոց անկախութեան կորչիլը:
Ո՞ւմ ծննդից է սկսուում քրիստոնէից տարեթիւր.
երբ է սկսուում Հայոց, Յունաց, Հռովմայեցոց,
Մահմետականաց տարեթիւր և այլն:

- 2, Որոնեցէք ի յօլուածներից ժամանակական պարա-
գայք:
- 3, Կազմեցէք նախագասութիւններ և որոշեցէք ստո-
րոգեալի գործողութեան ժամանակը յետագայ մակբայնե-
րովս. երբ որ, այն ժամանակը: Այժմ, այս բողէիս, արդէն, շա-
տով, դէտ ևս, իսկոյն, մեանգամ, երբեմն, միշտ, շատ ոսգամ,
այսօր, վաղը, եգուց, երէկ, աստ-օրեան, ինչ օրին, երեկոյեան,
վաղուց, ի վերջոյ, աստղուց, յետոյ, երբէք, ոչ երբէք:
Նախ՝ բերանացի, ապա գրաւոր:

§ 23.

Ե.

- 1, Զինուորը պատերազմում է չափաւելեանք:
Մարդ հարստանում է ո՛չ թէ պարսկերով, այլ աշխա-
տանքով:
- 2, Անահ ու աներիւշ համարչակ ասիր ճշմարտութիւնը:
- 3, Վահանը յանկարծ յարձակեցաւ թշնամու վերայ:
Պետրոսը դասնապէս լաց էր լինում:
Միմեանց հետ վարեցէք եղբայրաբար:

Երրորդ՝ կարելի է որոշել գործողութեան որպիսութիւնը, կերպը, (գր. Որակութիւն):

Այն բառերը, որոնք որոշում են գործողութեան որակութիւնը, կոչուում են որակիւն պարագայ:

Որակական պարագաները պատասխանում են հարցմանց՝ ի՞նչպէս, ի՞նչ կերպով (ինչո՞վ):

Որակական պարագաներ կարող են լինել՝

1, Գոյական գործիական հոլոված՝ քաջութեամբ, պարտքերով և այլն:

2, Ածական - անաս, աներկիւղ և այլն:

3, Որակիւն հակերպարծ, դառնապէս և այլն:

Գործիականը իրրև բնութեան խնդիր՝ է միևնոյն ժամանակ նաև որակական պարագայ:

Բ.

Վարժ. — Երեխան ի՞նչպէս է ման գալիս. — Երեխան ման է գալիս ծանր, թեթև, շուտ շուտ, զգուշութեամբ, անզգոյշ, երկիւղով, հանդարտ, կառքով և այլն: Ուրեմն ի՞նչպէս կարելի է ման գալ — ի՞նչպէս է կարելի խօսիլ, կարդալ, զրել, լսել, քնել և այլն: — ի՞նչպէս է վազում նապաստակը: — գնում խեցգետինը — աշխատում մեղուն և այլն:

Կազմեցէք նախադասութիւններ և որոշեցէք գործողութեան կերպը՝

ա) Գոյականով — Աշակերտը լսում է —, Սովորատը մեռաւ —, Նապաստակը վազում է — և այլն: — Զգուշութեամբ, Ծանափութեամբ, Հին սովորութեամբ, Հին օրէնքներով, շոգենաւով, արաստունքով, փետուրի թեթևութեամբ, սիրով

քաղցրութեամբ և այլն: — Կաթիլ կաթիլ — կարգ կարգ — գոյնգոյն — վաշտ վաշտ և այլն:

բ) Ածականով — Սովորատը մեռաւ — և այլն: Պայծառ փայլել — արագ վազել — ամենից լաւ գրել — ամենից գեղեցիկ, բարձրաձայն, պարզ խօսել — շատ, քիչ ուտել — արգար, սուտ, ճշմարիտ, համարձակ վկայել — սաստիկ տանջել — պինդ քարշել և այլն: Մանր մանր, թեթև թեթև, ծանր ծանր, արագ արագ, առանձին առանձին և այլն:

գ) Մակերայով — շուտ, կամաց, հազիւ, կամայակամայ, բոլորովին, խմբովին, ազդովին, գլխովին, այսպէս, հետիտան, յետեւ, կուրօրէն, տարէ ցտարի, օրէ ցօր, շուտ շուտ, շտապ շտապ, ստէպ ստէպ և այլն: Վերջապէս, վայրաբար, հայրաբար և այլն:

§ 24:

Ա.

Նախապ. — Երեխան գնում է դպրոց ուսանելու համար: — Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ինչի՞ համար է երեխան դպրոց գնում: «Ուսանելու համար ժամանակական պարագայ չէ. ապա թէ ո՞չ, դու ի՞նչ հարցմունք կարող էիր տալ: Տեղական պարագայ էլ չէ. ինչո՞ւ չէ: Ինչո՞ւ չէ նաև որակական պարագայ: Ասելով ուսանելու համար ի՞նչ է խկապէս որոշում:

Չորրորդ՝ կարելի է որոշել գործողութեան նպաստը համարձակութեամբ:

Գործողութեան նպատակը կամ պատճառը ցոյց տուող բառերը կոչուում են պատճառական պարագայ:

Երկրագործը գնում է դաշա (ինչո՞ւ) հնձելու: Ձկնորսը գնում է ձուկ որսալու: Աշակերտը վերցնում է գիրքը կարգալու: Ինչո՞ւ է ուսուցիչը ուսուցանում երեխաներին: Ինչո՞ւ համար ենք գրնում եկեղեցի: Ինչո՞ւ համար ենք վառում ծրագր: Ինչո՞ւ ենք շղթայում շունը: Ի՞նչ է պատճառը, որ մարդիկ ճանապարհորդութիւն են անում, — իւրեանց աները ծախում են, — պիտի ներեն իւրեանց մերձաւորին, — որ մեր հողին անմահ է:

Բ.

1, Խնամանակներից ժանգոտում է երկաթը:

Նորա արտադրանքներից խակոյն երևում է զիւղացի լինելը:

Վասակը ազատուեցաւ խորամանկութեամբ:

Նա մեծ վտանգի ենթարկուեցաւ իւր կնիքի մեծանշանութեամբ (մեծանշանութեան պատճառով):

Յրաւի պատճառով այս տարի խաղողը չհասաւ:

2, Մատիար մեզ հարկաւոր է գրելու համար:

Գիրքը գնում են կարգալու համար:

Պատճառական պարագաները ցոյց են տալիս նախ՝ գործողութեան պատճառը, երկրորդ՝ գործողութեան նպատակը:

Պատճառական պարագաներ կարող են լինել՝

- ա) Գոյականը բացառ. հողովում:
- բ) Գոյականը գործիական հողովում:
- գ) Գոյականը նախդրով:

Պատճառական պարագաները պատասխանում են հարցերին՝ Ինչո՞ւ, Ինչ է, Ի՞նչ պատճառով, Ինչի՞ համար:

Վարժ. — 1, Պատճառ: Նա մեռաւ իւր տաժանելի վշտերից:

Վասակը թալկացաւ իւր բարկութիւնից: Ազատը երկիւղից թագ կացաւ: Վայերը նախանձից սպանեց իւր եղբօրը և այլն: Մնասպարծութիւնից ստիպուած, — հարկից ստիպուած, — բարեգործութիւնից դրդուած, — ազահութիւնից և այլն: Ինչո՞վ կամ ինչից է ճանաչուում թռչունը, էջը, յիմարը, ձուկը, դասատունը և այլն: Ինչի՞ց է իմացուում զինուորը, — նորա բարեկիրթ, զիւղացի, չարասիրտ, բարեացակամ և այլն լինելը: — Մտանիչների ձեռքով Պարսիկները նուաճեցին Հայաստանը: Ջրի միջնորդութեամբ է շարժուում ջրաղացը: Ո՞ւմ ձեռքով կորաւ առաջին մարդը, մեռաւ մեծն Ներսէսը: Ինչո՞վ է շարժուում շոգեկառքը:

2, Նպաստի: — Ինչի՞ց է հարկաւոր բուրդը, գիրքը, ականջները, անկողինը, սապոնը, կառքը և այլն: Ինչի՞ց է գործ դնում ձին իւր յետին ոտները, եղը — իւր եղջերները, խոզը — իւր կնճիթը, զերձակը — իւր սակղը, հիւսնը — իւր խարաբուղը, որսորդը — իւր հրացանը, երկրագործը — իւր արօրը, նկարիչը — իւր վերձինը: Ինչի՞ց համար էր պատերազմում Վարդանը,

Պապը, Հայկը և այլն: Ինչև՞ համար են թռչունները շինում բուն, Հայերը գաղթում Հայաստանից և այլն:

Իմ հայրս օտարութեան մէջ է, ես ուզում եմ նորան մի քանի բան հաղորդել. ի՞նչ միջոց պիտի գործ դնեմ այդ նպատակին հասնելու համար: Ես պիտի նամակ գրեմ հօրս մի քանի բան հաղորդելու համար: Ի՞նչ միջոցներ է հարկաւոր գործ դնել յետագայ նպատակներին հասնելու համար — կորցրած բանս գտնել — անողջութիւնդ վերանորոգել — զգեստները իստակել — սենեակը տաքացնել — ապրել — ուսուցչի ասածը հասկանալ և այլն և այլն: — Ի՞նչ նպատակ է կարելի հասնել յետագայ միջոցներովս. մի ձի պահել — վաղ արթնանալ — գրքեր կարգալ — եկեղեցի գնալ — ողորմութիւն անել — ուշադրութեամբ լսել և այլն:

§ 25.

Բ ու շ ու ո թ ո չ .

Ա.

Մի գործողութիւն կատարելիս, հարկաւոր է իմանալ նախ թէ ի՞նչ է գործւում, գործւել ու պիտի գործւի: Մի բան գործելու համար հարկաւոր է մի անձն, մի աւարկայ, որ գործէ — գործող անչո՞ւ կամ գործող ստորից: — Շատ անգամ գործողութիւնը անցնում է մի ուրիշ աւարկայի վերայ — կրող անչո՞ւ կամ կրող ստորից: Ուրեմն՝ մի որ և է գործողութիւն կատարելիս հարկաւոր է

ուշադրութիւն դարձնել ա) գործողութեան վերայ, բ) գործողի վերայ, գ) կրողի վերայ:

Ամենայն ինչ գործւում է մի որ և է ժամանակում — այսօր, վաղը կամ երէկ և այլն: Ուրեմն՝ հարկաւոր է ուշադրութիւն դարձնել դ) այն ժամանակի վերայ, երբ մի բան է գործւում = 1, 2, 3, 4:

Ինչ որ գործւում է, պիտի գործւի անշուշտ մի որ և իցէ տեղ. ուստի ե) և այն տեղի վերայ, ուր մի բան է գործւում — 1, 2, 3, 4, 5:—

Ամենայն ինչ գործւում է մի որ և է կերպով, ուստի հարկաւոր է ուշադրութիւն դարձնել նաև զ) թէ ինչպէս է գործողութիւնը կատարւում. 1, 2, 3, 4, 5, 6.

Ամենայն ինչ, որ գործւում է, ունի իւր պատճառը, ուստի նաև է) այն պատճառի վերայ, որով մի բան է գործւում: 1, 2, 3, 4, 5, 6, 7:

- 1, Ենթակայ.
- 2, Ատորոգեալ.
- 3, Խընդիր (Արացուցիչ).
- 4, Ժամանակական պարագայ.
- 5, տեղական պարագայ.
- 6, որակական պարագայ.
- 7, պատճառական պարագայ:

Բ.

Մենք տեսանք, որ՝

- 1, Ազդականը գործ է ածւում նախ՝ իբրև ենթակայ, երկրորդ՝ իբրև որոշիչ բառ, երրորդ՝ ցոյց է տալիս թէ ենթակայ ի՞նչ է, ո՞վ է:
- 2, Սեռականը գործ է ածւում իբրև որոշիչ բառ:
- 3, Տրականը — նախ՝ իբրև բնութեան խնդիր, երկրորդ՝ իբրև տեղական պարագայ (օ՞ւր):

4, Հայցականը — նախ՝ իբրև սեռի խնդիր (ներգործական բայերի), երկրորդ՝ իբրև ժամանակական պարագայ:

5, Բացառականը — նախ՝ իբրև սեռի խնդիր (կրաւորական բայերի), երկրորդ՝ իբրև բնութեան խնդիր (ներգործ. բայերի), երրորդ՝ իբրև տեղական պարագայ (ո՞ր տեղից), չորրորդ՝ իբրև պատճառական պարագայ, հինգերորդ՝ իբրև ժամանակական պարագայ:

6, Գործիականը — իբրև բնութեան խնդիր և է միւլենոյն ժամանակ ա) տեղական պարագայ (ո՞ր տեղով), բ) որական պարագայ (ինչպէ՞ն, ինչով = ի՞նչ գործիքով), գ) պատճառական պարագայ (ո՞ւմ, ինչի՞ ձեռքով, միջնորդութեամբ):

7, Ներգոյականը — իբրև բնութեան խնդիր և է միւլենոյն ժամանակը ա) տեղական պարագայ (ինչո՞ւմ, ո՞ր տեղ), բ) ժամանակական պարագայ:

Վարժ — Գործածեցէք ուղղ. 1, իբրև ենթակայ, 2, իբրև որոշիչ, 3, իբրև ստորոգեալ: — Գործածեցէք բացառականը 1, իբրև սեռի խնդիր, 2, բնութեան խնդիր, 3, տեղական պարագայ, 4, պատճառական պարագայ և այլն և այլն:

Գ.

Ենթական և ստորոգեալը նախադասութեան գլխաւոր անդամներ են. իսկ լրացուցիչ ու որոշիչ բառերը և գործողութեան պարագաները կոչուում են նախադասութեան երկրորդական անդամներ:

Այն նախադասութիւնը, որ կազմուած է միայն մի են-

թակայից և մի ստորոգեալից, կոչոււմ է պարզ նախադասութիւն (§ 3 և 4):

Իսկ եթէ մի որ և է նախադասութեան մէջ լինին նաև երկրորդական անդամներ, այն ժամանակը նա կոչոււմ է ընդարձակ նախադասութիւն:

§ 26.

Տիգրանը իւր դասը լաւ է սովորում:

Տիգրանը լաւ է սովորում իւր դասը:

Տիգրան, դասդ լաւ սովորիր:

Տիգրանը ի՞նչ լաւ է սովորում իւր դասը:

Նախադասութիւնը կարող է պարունակել իւր մէջ՝

ա) կամ մի հաստատուն, պատմական միտք,

բ) կամ մի հարցմունք,

գ) կամ մի հրաման,

դ) կամ մի զարմանք:

Ուստի նախադասութիւնները լինում են՝ Պարման, Հարցման, Հրամայման, Զարմայման:

1, Ամեն նախադասութեան վերջին դնւում է վերջակէտ:

2, Հարցական նախադ. մէջ գործ է ածւում հարցական նշանը (°), որ դնւում է այն նշանագրի վերայ, որ հարցանելիս շեշտոււմ է:

3, Զարմացական նախադ. մէջ գործ է ածւում շարմայմանը (∩), որ դնւում է զարմանք ցոյց տուող բառի վերայ:

4, Հրամայական նախադ. մէջ շեշտը (') դնւում է այն բառին վերայ, որ հրամայելիս շեշտոււմ է: Այդ բառը միւս բառերից անջատոււմ է նաև ստորակէտով:

§ 27.

Հաւերը ուտում են արմախք, միջատներ ու որդներ:

Հաւերը ուտում են արմախք:

Հաւերը ուտում են միջատներ:

Հաւերը ուտում են որդներ:

Հաւերը վազում են, թռչում են, կրկնում են, քնում են ու թուխն են ստանում:

Աթէնքը ու Սպարտան Յունաց մայրաքաղաքներն էին:

Հարուստ լէ տղքատ, գիտուն լէ ազէս բոլորեքեանք էլ մի են Աստծոյ առաջին:

Ով որ թողնէ իւր տունը իմ եղբօր: իմ քուորքը իմ հօրը իմ մօրը և գայ իմ ետեւիցս, նա արքայութիւն կը մտնէ:

1, Նախագասութեան մէջ կարող են գտնուիլ շատ նոյնատեսակ անդամներ, զոր մի ստորագեալ կարող է ունենալ շատ ենթականեր, մի ենթակայ շատ ստորագեաներ: Այսպէս նաև միեւնոյն գոյականին կարող են պատկանել շատ որոշէ բառեր, միեւնոյն բային շատ խընդիրներ ու պարագաներ: — Արտօրէալ նախագասութիւն:

2, Նախագասութեան նոյնատեսակ անդամները կապում են միմեանց հետ զանազան բառերով և կամ գրելիս բաժանում են ստորակէտով:

3, Այն բառերը, որոնք կապում են միմեանց հետ նախագասութեան նոյնատեսակ անդամները, կոչում են շողչապ:

Նաղկապներ են օրինակ՝ ե, ու, լէ, իմ, Բայց, իսկ և այլն:

4, Եթէ նախագասութեան նոյնատեսակ անդամներ

կապին միմեանց հետ ե, ու, լէ, իմ շողկապներով, այն ժամանակը նորա էլ ստորակէտով չեն բաժանում:

5, Եթէ այդ անդամները շատ են, կապում են կամ երկու երկու, կամ բոլորը միասին և կամ միայն վերջին երկուսը: Իսկ չմիաւորւածները ստորակէտներով անջատում են միմեանցից:

Արժութիւնք: —

1, Եսպ Ենթակուէր ե մի ստորագէտ:

Աքաղաղն ու հաւը ճանաչում են իւրեանց ձագերին: Սէրը և կամքը մեծամեծ գործերի թեւերն են: Նախանձն ու ատելութիւնը անբաժան ընկերներ են: Շունը, արջը և — կաթնակեր անասուններ են: Վարապը, ծիծեռնակը և — թռչուններ են: Պօղոսը և — Քրիստոսի աշակերտներն էին: Ոսկին ու — ազնիւ մետաղներ են: Երկաթն ու — անարգ մետաղներ են: Վարդանը, Ղևոնդ երէցը և — մեռան իբրև վկայք քրիստոնէութեան: Թէ թէյը և թէ սուրճը արտասահմանից են բերում: Ոչ թէ միայն երկիրս, այլ և Ղուանթազը, Փայլածուն, Հրատը և Երևակն էլ են մոլորակներ:

2, Եսպ ստորագէտներ ե մի Ենթակուէր:

Հաւերը կարող են վազել ու թռչել: Ձին գեղեցիկ է և օգտաւէտ: Թրխական հաւը ծածկում է իւր թեւերի տակ ձագերին և նոցա համար ապաստանարան ու քաջ պաշտպան գտնում: Յիսուս քարոզեց, հալածեցաւ, մատնեցաւ, չարչարեցաւ, խաչեցաւ, թաղեցաւ, յարուցեց թիւն առաւ և երկիրը համբարձաւ: Աշխատանքը (վաստակը) կարճում է ժամանակը և երկարեցնում կեանքը:

Քո պաշտօնիդ մէջ դու միշտ եղի՛ր խիստ, անաչառ, ճիշտ, կարգասէր, աշխատասէր և ջանասէր: Քրիստոս Աստուած է մարգարէ, վարդապետ, ուսուցիչ և թագաւոր: Աստուած երկրիս ստեղծողն է, պաշտպանն ու կառավարիչը: Աստուած ամենակարող է, զթառատ է, համբերող է ու ողորմած: — Քրիստոնեան ո՛չ թէ միայն պիտի լսէ քարոզը, կարգայ աւետարանը, այլ և նա պիտի և այլն:

3, Շատ որոշեցէ՛ր:

Աղանձները մի սիրուն, գեղեցիկ, խաղաղասէր ու հանգարտ թռչուններ են: Հեռացի՛ր դու արտաքուստ մտերիմ, բարեբարոյ, երախտաւոր, քաղցրաբարոյ մարդկանցից: Ջանասէր ու հնազանդ աշակերտին ուսուչեցը դովում է, իսկ — — նախատում է: Գաղղիայի, Խալիլայի և — բնակիչները ըստ մեծի մասին պատգաղաւան են: Դու իմ խելօք, իմ սիրուն երեխաս ես: Մեղունները ո՛չ թէ միայն մի ջանասէր, այլ և մի — կենդանիներ են:

4, Շատ խնդիրներ:

Միտը կերակրում է իւր ձագերին հունդերով ու միջատներով: Արեգակը մեզ տալիս է լոյս և ջերմութիւն: Դարունը շնորհում է նոր արթնացած բնութեան կեանք և ուրախութիւն. նա կանաչեցնում է ծառերը, տունկերը, բանջարները, գաշտերը և ձորերը: Խոստանալ և իւր տուած խօսքը պահել, վայել է թէ՛ ծերերին և թէ՛ մանուկներին: Արտօրդ որտում է — — Մահը խլում է այս կեանքից որպէս —, այնպէս և —, որպէս —, այնպէս և —: Պատերազմը վնաս տուաւ ո՛չ թէ միայն, այլ և —: Մարդս պարտական է — —: 1319 թուականին Պարսիկները առնելով Անի քաղաքը ո՛չ ոքին

չխնայեցին — ոչ ծերերին և ո՛չ էլ մատաղ մանուկներին, ո՛չ կանանց և ո՛չ էլ թոյլ աղջկանց:

5, Շատ որոշեցէ՛ր:

Մշակը բանում է դաշտումը և պարտիպումը: Թռչունները բուն են դնում մասամբ —, մասամբ — և մասամբ —: Ջուրը գտնուում է որպէս —, այնպէս և — և այլն: Արաքսը հոսում է նախ՝ Կարին գաւառովը, յետոյ —, ապա —, վերջապէս —: Թռչունները սլանում են օդի մէջ երբեմն դէպի վերև, երբեմն —, երբեմն —, երբեմն —: Մոշենին բուսանում է կամ պարտիզների մէջ կամ ստուերապատ ու անմշակ տեղերում կամ ցանկերի ու մացառուաների մէջ կամ փողոցներում կամ լեռների վերայ ու ձորերի մէջ: — Հոգսերից, վտանգներից ու զանազան թշուառութիւններից յետոյ ի վերջոյ գալիս է մահը: Քանի որ ես ապրում եմ և առողջ եմ, կը հոգամ քու կարիքներդ: — Աշակերտը ընթեռնում է պարզ ու բարձրաձայն: Մարդիս իւր կամքն է շինում մեծ կամ նուաստ: Կատաղած ձին փրթկալով ու հեհեալով թռաւ մեր մօտիցը: Կիտութեան մի մասը ստացւում է ո՛չ թէ կարգալով, այլ մտածելով:

Աշակերտը կարդում է, որպէս զի ժամանակ անց կացնէ և մի բան ուսանի: Քրիստոս մեր չարագործութեանց համար խաչուեցաւ և մեր մեղքերի համար մեռաւ: — — Ծանաչուում է —: և այլն:

Արոնեցէ՛ք X յօդուածներից միաւորեալ նախադասութիւններ: Կազմեցէ՛ք նոցանից պարզ նախադասութիւններ, յետոյ կրկին միացե՛ք միայն ուրիշ շարկապներով: Բազմաթիւ վարժութիւնք:

§ 28.

Գլխի Բ. — Բառ:

Գ ո յ ա է ա ն:

Ե շ ա է Է

Ուղղ.	}	ճառ . . .	ոսկի . . .	լեռը . . .	տէրութիւն.
Հայց.		ճառի . . .	ոսկու . . .	լեռան . . .	տէրութեան,
Սեռ.		ճառի . . .	ոսկու . . .	լեռան . . .	տէրութեան,
Տրակ.		ճառից . . .	ոսկուց . . .	լեռանից . . .	տէրութիւնից,
Բաց.		ճառից . . .	ոսկուց . . .	լեռանից . . .	տէրութիւնից,
Գործ.	}	ճառով . . .	ոսկով . . .	լեռնով . . .	տէրութիւնով,
		ճառով . . .	ոսկով . . .	լեռնով . . .	տէրութեամբ,
Ներգ.		ճառում . . .	ոսկում . . .	լեռնում . . .	տէրութիւնում:

Յ ո չ ն ա է Է:

Ու.	}	ճառեր,	ոսկիներ,	լեռներ,	տէրութիւններ.
Հ.		ճառերի,	ոսկիների,	լեռների,	տէրութիւններ.
Ս.		ճառերի,	ոսկիների,	լեռների,	տէրութեանց,
Բ.		ճառերից,	ոսկիներից,	լեռներից,	տէրութիւններից,
Գ.		ճառերով,	ոսկիներով,	լեռներով,	տէրութիւններով,
Ն.		ճառերում,	ոսկիներում,	լեռներում,	տէրութիւններում:

1, Երբ որ բառերը իւրեանց վերջաւորութիւնքը փոփոխում են, ասում ենք թէ նոքա հոլովում են: — Բա-

ռերի զանազան տեսակ հոլովուիլը կոչում է հոլովման:

2, Հոլովմանքների որոշող նշանագիրն է եղակի սեռա-

- կանի վերջին ձայնաւորը: Ուստի երեք հոլովմանք կայ, այն է՝
 - ա) Է հոլովմանք — ծառ, ծառի.
 - բ) ո հոլովմանք — ոսկի, ոսկու.
 - գ) ա հոլովմանք — լեռը, լեռան, տէրութեան.

Վարժ. ա) Հոլովեցէք 1, սեղան, նստարան, պատուհան, սենեակ, տետրակ, գիրք և այլն: — 2, մատանի, եկեղեցի, կղզի, հողի, փոշի, խնձորենի, կենդանի, զինի, թշնամի, որդի, թագուհի և այլն: 3, ձուկը, գուռը, թոռը, ձեռք, ոտը, մատը, նուռը, կուռը և այլն: Ծրհնութիւն, ընկերութիւն, հիւսնութիւն, քաջութիւն, եղբայրութիւն և այլն: Բերանացի. Գրաւոր:

- բ) Հոլովեցէք — Արամ, Տիգրան, Վահան, Վարդան, Հայկ, Արշամ, Արշակ, Վահէ և այլն: Կով, ձի, էշ, գառն, այծ և այլն:

3, Ենչաւոր առարկաների Հայցականը նման է Տրակա-

նին, իսկ անշունչներինը Ուղղականին:

§ 29.

Ա.

- Կովարածը հով է արածեցնում:
- Մենք թի հով ունինք:
- Մեր հովը կաթն է տալիս:
- Ես հըշէ տեսած չեմ:
- Աղթամարը թի հըշէ է:
- Աղթամար հըշէն գտնում է Վանայ լճումը:

1, ն և ը տառերը դնուելով գոյականի վերջին, նորան մի որոշ միտք են տալիս : ն և ը տառերը այդ դիպուածում կոչուում են որոշեալ յօր :

2, ն դնուում է ձայնաւորով վերջացած բառի վերայ, իսկ ը՝ բաղաձայնով :

3, Ֆ կոչուում է անորոշ յօր, որովհետեւ դնուելով գոյականի առաջին, նորա ընդհանուր միտքը մասնաւորի է ամփոփում առանց նորա ո՛րը լինելը որոշելու :

4, Գոյականը գործ ածուելով առանց որ և է յօդի, ստանում է մի ընդհանուր, անորոշ միտք :

Բ . -

Խնձորի ծառ,

Խնձորի ծառի տերևներ,

Խնձորի ծառից,

Խնձորի ծառով

և այլն. և այլն :

Մեր խնձորի ծառը,

Մեր խնձորի ծառի՞ տերևները,

Մեր խնձորի ծառիցը,

և այլն. և այլն :

Մի խնձորի ծառ,

Մի խնձորի ծառի տերևներ,

Մի խնձորի ծառից,

և այլն. և այլն :

1, Հոլովելիս՝ ածականը միշտ մնում է անփոփոխ. հոլովում է միայն գոյականը :

2, Գոյականը կարող է հոլովուել կամ յօդերով և կամ առանց որ և է յօդի :

3, Անորոշ յօդը (մի) միայն եզակակուսն է վարուում, իսկ յոքնականումը գոյականը հոլովում է անորոշ մտքով առանց որ և է յօդի :

4, Յօդը դնում է միայն գոյականի վերայ :

5, Որոշեալ ու անորոշ յօդը միասին չի կարելի գործ ածել, որովհետեւ որոշեալ, յայտնի առարկան չի կարող մի և նոյն ժամանակ և անորոշ, անյայտ լինել. ուստի սխալ է, եթէ ասենք՝ մի ծառը, մի դպրոցումը և այլն :

§ 30.

1, Զին ուժեղ է :

2, Զին սուսուէլ (սուէլ) ուժեղ է, քան թէ էլը : Զին էշեյ ուժեղ է :

3, Փիղը մեծաուժեղ կենդանի է :

Փիղը ամեն կենդանիներից ուժեղ է :

1, Ածականը նախադասութեան մէջ երեք կերպ է գործ ածուում : նա ցոյց է տալիս՝

ա) Գոյականի մի որ և է յատկութիւնը : Ածականի այդ ձևը կոչուում է որոշեալ սասիճան :

բ) Մի գոյական միւսի հետ բաղադատում է : Ածականի այդ ձևը կոչուում է բաղադատական սասիճան :

գ) Ցոյց է տալիս, որ մի գոյական իւր որ և է մի յատկութեամբ բոլոր իւր նմաններից կամ գերազանց է, կամ ստոր : Այդ ձևը կոչուում է գերադասական սասիճան :

2, Բաղադատական աստիճանը կազմում է դրականի վերայ սուէլի կամ սուսուէլ բառերը յաւելացնելով :

3, Գերադրականը կազմուած է գրականի վերայ ահա բառը յաւելցնելով և կամ պարագայական բառերի միջնորդութեամբ:

Վարժ. — 1, Բարդարտիան.

Պողովատը առաւել պինդ է, քան երկաթը կամ պողովատը երկաթից պինդ է: Ծովը առաւել խոր է, քան զետը — ծովը զետից խոր է: Զինը առաւել սպիտակ է, քան թուղթը — ձինը թղթից սպիտակ է: Բաղդատիր լուանի և աստղերի լուսաւոր լինելը — հսկայի ու թղուկի, էշի ու ձիի, զառան ու ոչխարի, ընջուղի ու կովի, մուզու ու եզան, ուլի ու այծի մեծութիւնը, զօրութիւնը — ձերի ու երեխայի տարիքը, աղուեսի ու կապիկի խորամանկութիւնը, գերձանի ու զծի երկայնութիւնը, լեռան ու բլրի բարձրութիւնը, մի ֆունթի ու փութի, զանակի ու զմէլնի սրութիւնը և այլն. և այլն:

2, Բարդարտիան. — Բո բեռը ծանր է. իմ բեռը քոնիցը ծանր է, իսկ նորանը մեր ամենից ծանր է: Իմ բեռը առաւել ծանր է, քան թէ քոնը, իսկ նորանը մեր ամենից ծանր է: — Շաքարը քաղցր է, օշարակը առաւել քաղցր է, իսկ մեղրը ամենից քաղցր է — ամենաքաղցր է: Բաղդատիր — զանակի, զմէլնի ու ածելու սրութիւնը — կզմենդրի, պղնձի ու ծծումբի զոյնը — պիծակի, մեղուի ու ձանձի փոքրութիւնը — զպրօցի, եկեղեցու ու ապարանքի մեծութիւնը — ապակու, ջրի ու օդի թափանցիկութիւնը և այլն: Որն է ամենամեծ կենդանին, թռչունը, ձուկը և այլն. — ամենափոքր կենդանին, թռչունը և այլն:

§ 31.

Ա. ԱՆՁՆԱԿԱՆ ԳԵՐԱՆՈՒՆՆԵՐ:

Ե շ ա չ է	Ես	Յ ա ն ա չ է
Ուղղ.	— ես	մենք,
Սեռ.	— իմ	մեր,
Տ. Հ.	— ինձ	մեզ,
Բացռ.	— ինձանից, ինձնից, .	մեզանից, մեզնից,
Գործ.	— ինձանով	մեզանով,
Ներգ.	— ինձանում	մեզանում:

Ե շ ա չ է	Դու	Յ ա ն ա չ է
Ուղղ.	— դու	դուք:
Սեռ.	— քո, քառ	ձեր,
Տ. Հ.	— քեզ	ձեզ,
Բացռ.	— քեզանից, քեզնից .	ձեզանից, ձեզնից,
Գործ.	— քեզանով	ձեզանով,
Ներգ.	— քեզանում	ձեզանում

Ե շ ա չ է	Նա	Յ ա ն ա չ է
Ուղղ.	— նա	նրանք, նոքա,
Սեռ.	— նրա, նորա,	նրանց, նոցա,
Տ. Հ.	— նրան, նորան.	նրանց, նոցա,
Բացռ.	— նրանից, նորանից . . .	նրանցից, նոցանից,
Գործ.	— նրանով, նորանով, . . .	նրանցով, նոցանով,
Ներգ.	— նրանում, նորանում, . . .	նրանցում, նոցանում:

Ա. յօպէս նաև ա, ր:

Բ. ՍՏԱՅԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ:

Ն շ ա չ է

Ո.Ն.—	իմ, քո, իւր, մեր, ձեր, իւրեանց (իրենց)	զիրքը,
Ս. —	իմ » » » » » »	զրբի կազմը,
Տ. —	իմ » » » » » »	զրբին,
Բ. —	իմ » » » » » »	զրբիցը,
Գ. —	իմ » » » » » »	զրբովը,
Ն. —	իմ » » » » » »	զրբումը:

Յ ա չ ն ա չ է

Ո.Ն.—	իմ, քո, իւր, մեր, ձեր, իւրեանց	զրբերը,
Ս. —	իմ, » » » » » »	զրբերի թերթերը,
Տ. —	իմ, » » » » » »	զրբերին,
Բ. —	իմ, » » » » » »	զրբերիցը,
Գ. —	իմ, » » » » » »	զրբերովը,
Ն. —	իմ, » » » » » »	զրբերումը:

Այսպէս նաև սրբա, սոցա, արբա, արցա, նսրա, նոցա զիրքը, զրբերը:

Գոյականը որոշուելով իմ, քո, իւր, մեր, ձեր, իւրեանց ստացական — և՛ սրբա, սոցա, արբա, արցա, նսրա, նոցա ցուցական գերանուններովս, բոլոր հոլովներում ստանում է որոշեալ յօդ:

Գ. Դ ի Տ ո Ր ո Ղ յ օ Ր :

Գիրք» տո՛ւր:

Իմ զիրքը տո՛ւր:

Գիրք» ա՛ն:

Առ քո զիրքը:

Նա իւր զիրքը ուզում է:

Մատանին կորցրաւ:

Նա իւր մատանին կորցրաւ:

«, դ, ն, ը անուանւում են դերանուններ համ դիճարոշ յօդ, որովհետև ծագում են գերանուններից և որոշում են դէմքը — « (ե») առաջին դէմքն է, դ (դու) երկրորդ, ն, ը (նա) երրորդ: Դիմորոշ յօդերը կարող են փոխարինել ստացական գերանուններս իմ, քո, նորա և այլն:

§ 32.

Թ Ո Ւ Ա Կ Ա Ն Ա Ն Ո Ւ Ն.

Ք ա ն ա չ ա չ ա ն	Դ ա ա ա չ ա ն
Մէկ, մի	առաջին,
Երկու	երկրորդ,
Երեք	երրորդ,
Չորս	չորրորդ,
Հինգ	հինգ երրորդ,
Վեց	վեց երրորդ,
Եօթը	եօթն երրորդ,
Ութ	ութ երրորդ,
Ինը	ինն երրորդ,
Տասը	տասն երրորդ,
Տասն ու մէկ	տասնումէկերրորդ,
Տասն երկու	տասն երկու երրորդ,
Տասն երեք	տասն երեք երրորդ,
Տասն ու չորս	տասն ու չորս երրորդ:

Տասն ու Հինգ	տասն ու Հինգերորդ,
Տասն ու վեց	տասն ու վեցերորդ,
Տասն ու եօթը	տասն ու եօթներորդ,
Տասն ու ութ	տասն ութերորդ,
Տասնինը	տասն իններորդ,
Քսան	քսաներորդ,
Երեսասն	երեսներորդ,
Քառասան	քառասներորդ,
Յիսուան	յիսներորդ,
Վաթսուան	վաթսներորդ,
Եօթանասան	եօթանասներորդ,
Ութսուան	ութսներորդ,
Իննսուան	իննսուներորդ
Հարիւր	հարիւրերորդ,
Հազար	հազարերորդ,
Միլիոն	միլիոններորդ,

Վարժաւելիւնս. — Դրեցէք 3, 5, 10, 90, 1865, 945,
2-րդ, 4-րդ և այլն. և այլն. և այլն:

Մասն. Քանակական ու դասական թուականները հոլ-
լովուտ են գոյականների և հոլովման պէս: Միայն հար-
կաւոր է իմանալ որ՝

- 1, Մի հոլովուելիս ընդունում է ն — միսի, մինից և այլն:
- 2, Երկու » » — երկուսի, երկուսից
և այլն:
- 3, Եռը » » կորցնում է ը տառը = եօթի,
եօթից և այլն:
- 4, Տասը, ինը » » իւրեանց ը տառը փոխում
են ն — ինսի, ինսից և այլն. տասնի, տասնից և այլն:

§ 33.

Բ Ա Յ.

Ա.

Նա աշակերտ	է՛մ,	Նա աշակերտ	է՛ք,
Դու »	է՛ս,	Դու »	է՛ք,
Նա »	է՛ն,	Նա »	է՛ք,
Մենք աշակերտներ	է՛նք,	Մենք աշակերտներ	է՛նք,
Դուք »	է՛ք,	Դուք »	է՛նք,
Նոքա »	է՛ն:	Նոքա »	է՛նք,

Բ.

Նա գնում է՛ տուն:	Դու՞, նա՞, մե՞նք, դո՞ւք, նոքա՞:
Նա գնում է՛ տուն:	» » » » »
Նա գնալու է՛ տուն:	» » » » »
Նա գնացել է՛ տուն:	» » » » »
Նա գնացել է՛ տուն:	» » » » »

Բայը կարող է խոնարհուիլ նախ օժանդակ բայի օգ-
նութեամբ:

Երբ որ ես գնամ տուն:	Դու՞, նա՞, մե՞նք, դո՞ւք, նոքա՞:
Երբ ես գնամ տուն:	» » » » »
Երբ որ ես տուն գնայի:	» » » » »
Երբ ես տուն գնայի:	» » » » »
Նա էլու- է՛նք ասաց,	» » » » »
որ ես տուն գնամ:	» » » » »

Ես պիտի գնամ տուն: Դո՛ւ, նա՛, մե՛նք, դո՛ւք, նորա՛:
 Ես պիտի տուն գնայի: » » » » »
 Ես էլ գնամ տուն: » » » » »
 Ես էլ գնայի: » » » » »

Բայը կարող է խոնարհուիլ նաև երբ, է՛կէ, որ, պիտի, էլ բառերի օգնութեամբ:

Ես գնացի տուն: Դո՛ւ, նա՛, մե՛նք, դո՛ւք, նորա՛:
 Գնա՛ տուն — Գնացէ՛ք տուն:

Բայը խոնարհուում է երրորդ՝ առանց մի որ և է բառի օգնութեան:

Վարժ. Խոնարհեցէք նախ՝ օժանդակ բայի, յետոյ երբ որ, եթէ և այլն բառերի հետ և ի վերջոյ միայնակ — զիբք կարգալ, նամակ գրել, գտակ կարել, փայտ կրել և այլն: Նաև՝ Ես դերձակ, դարբին և այլն. եմ:

§ 34.

Ա. ԵՐԲ ՊԱՅՄՈՒՄ ԵՆՔ.

1, ն է բ է ա յ.

Ես գնամ է՛մ դպրոց (ե՛րբ): Դո՛ւ, նա՛, մե՛նք, դո՛ւք, նորա՛:

2, Ա ն յ է ա շ.

Ես գնայի դպրոց (ե՛րբ): Դո՛ւ, նա՛, մե՛նք, դո՛ւք, նորա՛:
 Ես գնայել է՛մ դպրոց (ե՛րբ) » » » » »
 Ես գնայել էի դպրոց (ե՛րբ) » » » » »
 Ես գնամ էի դպրոց (ե՛րբ) » » » » »

Յ. Ա պ ա ա ն ի ք:

Ես էլ գնամ դպրոց (ե՛րբ) Դո՛ւ, նա՛, մե՛նք, դո՛ւք, նորա՛:
 Ես պիտի գնամ դպրոց (ե՛րբ) » » » » »
 Ես գնուիմ է՛մ դպրոց (ե՛րբ) » » » » »
 Ես գնուիմ էի դպրոց (ե՛րբ) » » » » »

Բ. — ԵՐԲ ՄԻ ՊԱՅՄԱՆ ԵՆՔ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ:

Եթէ եղանակը լաւ լինէր, ես էլ գնայի — ճեմելու:
 Եթէ դու գնաս ճեմելու, ես տանը կը մնամ:
 Եթէ դու գնայիր ճեմելու, ո՛վ պիտի մնար տանը:

Գ. — ԵՐԲ ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ:

Գնա՛ տուն: Գնայէ՛ք տուն: Այս տեղ մի՛ հասցէք:

Դ. — ԵՐԲ ԺԱՄԱՆԱԿԸ ՉԵՆՔ ՈՐՈՇՈՒՄ:

Ուսանելու համար հարկաւոր է գնալ դպրոց:

1, Խոնարհուող բայը՝ չորս եղանակ ունի.

- ա) Սահմանաւոր, որ պատմումէ այն, ինչ որ լինում է, եղել է, պիտի լինի:
- բ) Սարսափաւոր, որ գործողութիւնը պայմանի տակ է դնում և կամ յայտնում է խօսողի կասկածը կամ ցանկութիւնը:
- գ) Հրահրայական, որ յայտնում է խօսողի հրահրանքը կամ խնդիրը:
- դ) Անորոշ, որ յայտնում է առարկայի գործողութեան լոկ սնունդ, առանց որոշելու թէ ո՛վ կամ ե՛րբ է գործում:

2, Սահմանականը ութ ժամանակ ունի՝

1, Մի ներկայ — գնում եմ, խօսում եմ, գործում եմ:

2, Զորս անցեալ

ա) Կարողեալ — գնացի, խօսեցայ, գործեցի և այլն:

բ) Անկարող — գնում էի, խօսում էի, գործում էի և այլն:

գ) Վարդանկարող — գնացել եմ, խօսացել եմ, գործել եմ:

դ) Գնդանկարող — գնացել էի, խօսացել էի, գործել էի:

3, Երեք ապաստանի՝

ա) Ապաստանի ասածին, որ կազմում է էլ և պետի բառերովս — կը գնամ, պիտի գնամ և այլն:

բ) Ապաստանի երկրորդ — գնալու եմ, խօսելու եմ:

գ) Ապաստանի երրորդ — գնալու էի, խօսելու էի:

3, Ստորագասականը երեք ժամանակ ունի՝

ա) Ներկայ — կը գնայի, կը խօսէի և այլն:

բ) Ապաստանի — իթէ գնամ և այլն:

գ) Անցեալ ապաստանի — իթէ գնայի և այլն:

Վարժաւիւնս. — Կարգացէք X յօդուածները և նոցա միջև պատահած բայերի ժամանակները փոխելով՝ ա) պատմեցէք ներկայումս, իբրև թէ ամենայն ինչ այժմ է պատահում: Բ) պատմեցէք անցեալ ժամանակներում, իբրև թէ ամենայն ինչ արդէն պատահել է: Գ) պատմեցէք ապաստանի ժամանակներում, իբրև թէ ամենայն ինչ յետոյ պիտի պատահի: Բերանացի՛, գրաւոր: Նա՛ս յօդուածներ:

§ 35.

Բ Ա Ր Դ Ո Ի Թ Ի Ի Ն:

Ա.

Հաց, գործ, ջուր, հող:

Հացարար, ջրաբեր, հողագործ:

1, Այն բառը, որ մի ուրիշ բառի հետ չի կապուած կամ յօդուած կոչուում է պարզ:

2, Այն բառը, որ երկու նշանական բառերից է կազմուած, կոչուում ենք բարդ:

Բ.

Աստուած - ա - պաշտ, շատ - ա - խօս, ել - ա - մուտ, Այլ - ե - այլ, վրէժ - խնդիր, վեր - արկու:

1, Երկու բառ միմեանց հետ կապուղ զիրը կոչուում է յօդակապ. ա, ու, ե յօդակապեր են:

2, Բարդութիւնը կարող է լինել՝

ա) Առանց որ և է յօդակապի — վրէժ-խնդիր, չէ-ա-ս, ծառ-ի-դրո-ւնի-ան, այս-չառի և այլն:

բ) ա յօդակապով, որ ամենից գործածական է ճարտար-ա-սեր, չարձ-ա-միտ, սով-ա-ճահ, պող-ա-բեր, չէ-ա-իւր և այլն:

գ) Երբեմն նաև ա, ե յօդակապերով — աստ-ա-մեր, համբ-ա-խաղ, այս-ա-չի, աղ-ա-հաց, երկ-ե-է. ել-ա-ճարտար, այլ-ե-այլ և այլն:

3, Առ հասարակ բարդութեան մէջ ոչինչ յօդակապ չէ գործ ածուում, եթէ առաջին բառը բաղաձայնով է վերջացած, իսկ երկրորդը ձայնաւոր է սկսուած. մեծ — անուն, մարդ — ատեաց, ծով — էզը, սրբ — արար, շուրջ — առ, կրօն — սոյց, տասն — ամեայ և այլն. և այլն:

Վարժուելիւն. Ի՞նչ կը նշանակէ — արդասէր = նա, որ իւր ազգը սիրում է: Ակօսաձև՞ է: Այն, ինչ որ ակօսի ձև ունի: Այսպէս նաև — աղօթատուն, ախոռապետ, անձնագով, բարեբախտ, բերդակալ, գազանաբարոյ, եղբայրադաւ, եղէգնաբնակ, ծանրաբեռն, ծովագնաց, ոսկիափայլ, պտղաբեր, քարաբլուր և այլն և այլն:

Յետագայ մտքերիցս շինեցէ՛ք բարդ բառեր.

1, Ազատ (ազնո-ազն) Ազնուականներից կազմուած գունդ գունդ (ազատագունդ) — ազնիւ կամ ազնուականների բարքով — ազատ խօսող — ազատ մտածող — ազնուականի որդի և այլն:

2, Անկիւն զիծ, քար:

3, Անձրև բերող, թափող, յուզող, անձրևի նման, շեթ, ջուր:

4, Բարի բարքով, բերող, բլխող, գործող, զէմքով. (լաւ կերպով) զարդարուած, խառն, խնամող, խօսող, կամեցող, կեցող, (կեաց), կրթուած, համով, համբաւ ունեցող, միտք ունեցող, նախանձ ունեցող, պաշտող, սիրտ ունեցող, վիճակ ունեցող և այլն:

5, Բերդ Բերդի մէջը, նման, տէր, բերդով, քաղաք, բերդ, պահող և այլն:

6, Գազան Գազաններով բնակուած, գազաններ բուծող, գազանի զէմքով, կերպարանքով (կերպ), կռիւ, մարդ, մտքով, սրտով, գազանի պէս շնչող:

7, Ծով Ծովով գնացող, ծովից ծնած, ծովի կողմը, զէպի ծով հայեցող, ծովի մէջը, պիտ, ցուլ, եղը:

8, Ոսկի Ոսկու պէս փայլող, ոսկի փետուրներով, փողով, զարդերով, բերանով, ոսկի թելերով հիւսած, ոսկուց ձուլած, ոսկով պատած և այլն:

9, Քար Քարի բլուր, զէզ կրթող, ժայռ, լեռան, կարկառ, կիր, անձաւ, սիրտ. — քար գործող, հատանող, տաշող, պաշտող, ձգող, մրտնող. — քարով ծեծուած և այլն.

§. 36

1, Բարդ գոյականները կազմուում են գոյականը գոյականի հետ կապելով, զօր. գարեջուր, ժամագիրք, հաւատուն, տարեգլուխ, զօրագլուխ, հօրաքոյր, մօրեղբայր, տնատէր, շնաձանձ, վարուցան, անձրևաջուր և այլն:

2, Ածական է կազմուում երբ բարթուում են՝

ա) Գոյականը գոյականի հետ: Այդ գիպուածում վերջին գոյականը ունենում է բայի միտք — արծաթասէր, մատենագիր, ձկնորս, հողագործ, շատախօս և այլն:

բ) Ածուխը, ֆոսֆորնի հէք. — Կարծազասակ,
պատարկարտն, բարեսիրտ, չարահոգի, գեղեցկադէմ

գ) Ածուխը — ածուխնի հէք — համրուխուլ,
խուժարուլ, խուժարուժ. և այլն:

դ) Գոյուխը Բայի արձապի հէք — հայրատեաց,
աստուածասպաշտ, ականատես, կենսատու, սերմնա-

ե) Ածուխը Բայի արձապի հէք — դիւրիմաց,
բարեզէն, ճարտասան, բարեկամ, չարակամ, չարա-

զ) Բարդ անուանելիս Կարճուժ էն Բարդ Բայեր — մատե-
նագրել, դատարկարանել, չարախօսել, բարեխօսել,

Ք Լ Ո Ւ Խ Պ. — Պ Ի Ր:

§ 37.

1, Տառը մի պարզ ձայն է, որ լուում է մեր բերանից:
Գիրը կամ նշանագիրը մի գծած նշան է, որ գործ է ածուում
տառի տեղ: Տառը շոշափելի է մեր ականջին, իսկ գիրը՝
մեր աչքերին:

2, Յետագայ 38 գիրը կոչուում է այժ Բէն կամ այլա—բէք.
ա, բ, գ, դ, ե, զ, է, ը, թ, ժ, ի, լ, խ, ծ, կ, հ, ճ,
ղ, ռ, մ, յ, ն, շ, ո, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ր, ց, ւ, փ,
ք, օ, ֆ:

3, Տառերը երկու տեսակ են՝ չայնուոր և բաղաչայն: Զայն-
ուորը նրանք են, որոնք իրանք իրանցից կարող են ձայն
տալ, օր, ա, է, ը, ի և այլն. իսկ բաղաչայնները նրանք

են, որոնք իրանք իրանցից, առանց մի ձայնաւորի օգնու-
թեան, չեն կարող ձայն հանել, ինչպէս գ, դ, թ և այլն:

4, Ձայնաւոր տառերը երկու տեսակ են՝ պարզ և երկբարբառ:

ա) Պարզ ձայնաւորները 8 են՝ ա, ե, է, ը, ի,
ո, օ, ու:

բ) Երկու պարզ ձայնաւորներ միանալով՝ կազ-
մում են երկբարբառներ, օր. եա, եօ, իւ
և այլն:

§ 38.

Մնացեալ 30 գիրը բաղաձայն են: Ք գիրը վերջին
ժամանակների գիւտ է և գործ է ածուում օտար բառերի
մէջ. նորա տեղ մեր նախնիք գործ էին ածուում փ:

Բաղաձայնները բաժանուում են

Նախ՝ իւրեանց ձայնին նայելով՝

ա) Նաբբ — պ, կ, տ, ծ, ճ, ս, լ, ը, յ, ն, մ:

բ) Մեջէ — բ, գ, դ, ձ, ջ, զ, ղ » հ, » »

գ) Թա — փ, ք, թ, ց, չ, շ, խ, ու, » » »

Երկրորդ՝ նայելով թէ նորա հնչելիս բերնի մէջ ինչ
տեղ են ընդունուում՝

ա) Նշող — զ, ժ, ծ, ձ, ճ, շ, չ, ջ, ս, ց:

բ) Կոչորայնիս, գ, կ, լ, զ, հ, յ:

գ) Նրբայնիս — բ, պ, փ, վ, մ:

դ) Լեղայնիս — դ, ա, թ, լ, ը, ն:

§ 39.

1, ա, ո ձայնաւորները բառի վերջին միայնակ չեն
մնում, այլ ընդունուում են յ գիրը. ծառայ, տղայ,
կթէ գայ, գնայ, զշխոյ, հաճոյ, և այլն:

Բացառութիւն են կազմում՝

ա) Յարուհի սուրբները — Յուդա, Ամերիկա, Եւրոպա
և այլն:

բ) Գերմանացիները — սա, դա, նա, սորա, գորա,
նորա, քո:

գ) Հրեայացիները — ասա՛, գնա՛, դողա՛ և այլն:

2, է և օ ձայներս բառի վերջին անփոփոխ չեն մնում,
այլ է փոխւում է է, իսկ օ դրից յետոյ անմիջապէս
մի բաղաձայն պիտի գայ. դնէմ—դնէ, գնում էմ—
գնում է. օր, տօն, զրօշ և այլն:

Իսկ եթէ բառի վերջին լւում է օ ձայնը, այն ժամանակը
զբւում է ո՛չ թէ օ, այլ ոյ. Աստծոյ, հաճոյ, նոյ, Ռուսոյ,
Մոսոյ և այլն:

3, Հայերէնում երկբարբառները կարող են կազմուիլ
երեք կերպով՝

1, ա, է, ի միանալով — գրի հետ — աւ, եւ, իւ:

2, ա, յ միանալով յ գրի հետ — այ, ոյ:

3, է միանալով օ գրի հետ — եօ:

Իսկ եթէ օտար լեզուներից առնուած բառերում ուրիշ
ձայնաւորներ միասին բաղադրուելու լինին, անշուշտ նոցա
մէջը պիտի ընկնէ մի բաղաձայն. այի, աչ է, ոչ է, ոհա և
այլն. ինչպէս Այիլաթ, Յոհաննէս, Տրոլադայ և այլն:

4, եթէ ա—ն պատահեցաւ միւս ա—ի հետ, առաջինը
կամ մնում է անփոփոխ և կամ նորա ա—ն
զեղջւում է. զօր. ձեռնտառ—թիւն կամ ձեռնտառ—
թիւն, աղնառ—թիւն կամ աղնառ—թիւն, կծառ—
թիւն կամ կծառ—թիւն, ծեծառում եմ, կռառում եմ
և այլն. և այլն:

§ 40.

1, Վ գիրը կարող է գրուիլ միայն բառերի սկզբին, իսկ
բառերի (պարզ) մէջ՝ միայն ՝ գրից յետոյ. Չարժ,
սովորել, ժողովել, խորովել և այլն:

Ծան. 1, Ուստի սխալ է, երբ օտար բառերի մէջ
գրում են Վ և ոչ —, օր. փոխանակ գրելու
Մորա—իա, Մոլդա—իա, Բա—արիա և այլն.
գրում են Մորավիա և այլն. և այլն:

2, Վերոյիշեալ կանոնից զարտուղւում են բարդ
բառերը.

զօրավար, հոգեվարչ, մասվաճառ և այլն:

1, ք գրից յետոյ եթէ ն պատահելու լինի, գրւում է
միշտ ա ն թէ հայ և թէ օտար բառերում. առնել,
Փառնակ, կոռնելիս, ամառն, ձմեռն, դուռն, ձեռն
և այլն:

3, Պարզ բառերի մէջ երբէք բաղաձայն տառը չի
կրկնւում. ուստի և օտար բառերի կրկնուած գրերը
հայերէն մի գրով է արտայայտուում. Քաբէոս
փոխ. Քաբէոս, Աբաս փոխ, Աբբաս և այլն: Իսկ
ուշուրթիւն, երբորդ և այլն. բարդ բառեր են:

§ 41.

Գեղ (1), փգեղ, փգեղա—լիւն, գեղեցիկ:

Կար (1), փկար, փկարա—լիւն, կարող, կարողա—լիւն:

Բարեբախտ, բարե—բախտա—լիւն:

(1) Գեղ գրաբար նշանակում է գեղեցկութիւն, իսկ կար —
ոյժ, կարողութիւն:

1, Բարդ կամ սարդ բառերը կարող են աննշան մասնիկներ ընդունիլ իւրեանց սկզբից, վերջից և կամ երկու ծայրիցն էլ: Այդ օրինակ բառերը կոչւում են **ածանցեալ իսկ այդ աննշան մասնիկները** — **ածանցական մասնիկներ:**

2, Բառը իւր սկզբից ընդունում է յետագայ մասնիկներս՝ որոնց նորա սկզբնական մոթին բացասական նշանակութիւն են տալիս.

- ա) **ան** — **անմիտ, անամօթ, անխոհեմ** և այլն:
- բ) **առ** — **առուշ, առերախտ** և այլն:
- գ) **ա** — **ազատ, ահաս, աձև** և այլն:
- դ) **աժ** — **աժ դոհ, աժբախտ** և այլն:
- ե) **աժ** — **աժգին, աժգոյն** և այլն:

§ 42.

Մեր հին լեզուում զոյականի ու ածականի վերջին դընւում էին բազմաթիւ ածանցական մասնիկներ, որոնցից մեր նոր լեզուումը շատ քիչ են մնացել:

1, Գոյական է կազմւում, երբ բառի վերջից յաւելացւում են յետագայ մասնիկներս.

- որորդ, առաջնորդ, հակառակորդ և այլն:
- պարտիզպան, դռնպան, պահապան և այլն:
- վաճառանոց, դպրոց, բազմոց, խոհանոց և այլն:
- Հայաստան, ծառաստան, բուրաստան և այլն:
- ննջարան, մենարան, նուագարան և այլն:
- աղջիկ (աղիճ), հայրիկ, մանկիկ, աչիկ և այլն:
- սպիտակեղէն, դգեստեղէն, անթեղէն և այլն:
- Թագուհի, աշակերտուհի, ուսուցչուհի և այլն:
- թագաւորութիւն, ուսուցչութիւն և այլն:
- արարած, յօդուած, շինուած, հատուած և այլն:

- սիրող, տեսնող, իշխող, տիրող և այլն:
- աղաչանք, պաղատանք, զարմանք և այլն:
- ճնունդ, մնունդ, սերունդ և այլն:
- հարուստ, կորուստ, ապրուստ և այլն:

2, ածական է կազմւում, երբ բառը իւր վերջից ընդունում է՝

- երկնաւոր, երկրաւոր, հոգեւոր, հեռաւոր և այլն:
- հայկական, մարմնական, գիւղական և այլն:
- ծակոտ, կասկածոտ, նախանձոտ, ցեխոտ և այլն:
- մոռացկոտ, ծիծաղկոտ, բարկացկոտ և այլն:
- Մամիկոնեան, Արամեան, Արեւելեան և այլն:
- Յովհաննիսեանց, Մուրատեանց և այլն:
- քաղաքացի, գիւղացի, նշանացի և այլն:
- մարդկային, աստուածային, քաղաքային և այլն:
- փոքրիկ, անուշիկ, քաղցրիկ և այլն:
- սիրելի, տեսնելի, հիանալի և այլն, և այլն:

Վարժուելիւնք. — Կարգացէք X յօդուածները, ընտրեցէք ածանցեալ բառերը և ցոյց տուէք թէ որն է բառի արմատը և որը ածանցական մասնիկը: Շատ յօդուածներ:

§ 43

1, Բայերը ածանցւում են էլ, իլ, ուլ, ան, ուլ մասնիկներովս՝

- ա) Բայերի արմատների հետ — բերել, ապրել, կարգալ, խոստանալ և այլն:
- բ) Գոյականների հետ — ջրել, խօսել, փրփրալ, լուսանալ, մարդանալ:

4) Ածականները — դեղինիլ, կարմիրիլ, ծե-
րանալ և այլն:

2, Կրաւորականները ածանցում են ներգործականներից
— մանրիկովս — ազատել, ազատուիլ — կարգաւ, կարգա-
ցուիլ — լուանալ, լուացուիլ և այլն:

§ 44.

Մակբայները ածանցում են յետագայ մասնիկներովս՝
բէն . . . հայերէն, ռուսերէն, տաճկերէն և այլն:

պէս . . . յայտնապէս, մեծապէս, վերջապէս և
այլն:

բար . . . իշխանաբար, եղբայրաբար, հայրաբար
և այլն:

չե . . . աքացի, բռնցի, նշանացի և այլն:

ի . . . կողմնակի, ուղղակի, յանկարծակի և
այլն:

նա . . . տակաւին, զլիսովին, վերստին և այլն:

§ 45.

Այս, չափ, լայն, սիրա.

Այս — չափ, ա — մեն, մար — դա — սեր,

Ո — զոր — մաճ, ար — դար, դառ — նալ, հանգ — չիլ:

1, Իւրաքանչիւր ձայնաւոր միանալով մի կամ շատ բա-
ղաձայների հետ, կազմում է վանկ: Ուստի բառը կարող է
բաժանուիլ այնքան վանկերի, որչափ որ ձայնաւորներ
ունի:

2, Իւրաքանչիւր ձայնաւոր՝ առանց բաղաձայնի՝ կարող
է կազմել մի վանկ:

3, Մի վանկ ունեցող բառը կոչւում է միավանկ, իսկ եր-
կու կամ շատ վանկեր ունեցողը — բազմավանկ:

4, Բռուերը վանկերի բաժանելիս՝ հարկաւոր է իմա-
նալ որ

ա) Միավանկ բառերը չեն բաժանւում:

բ) Երկու ձայնաւորի մէջ եղած բաղաձայնը
անցնում է յաջորդ վանկին:

գ) Եթէ երկու ձայնաւորի մէջ երկու կամ երեք
բաղաձայն ընկնէ, միայն վերջինը կարող է
յաջորդ ձայնաւորին անցնել, մնացածները
առաջինին հետ կազմում են մի վանկ:



3. Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
4. Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն

- ա) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- բ) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- գ) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- դ) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- ե) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- զ) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- է) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- զ) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն
- է) Եւ զի արքայապետն զայն արքայապետն զայն արքայապետն

Գինն է 25 կոպ.

2452

2013

« Ազգային գրադարան



NL0060518

